

ՏԱԹԵՎԻԿ ՇԱԽԿՈՒԼՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

7

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Ե 000

Տպագրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով

Հեղինակ՝ **Տաթևիկ Շախկույան**
Արվեստագիտության թեկնածու
Մասնագիտական խմբագիր՝ **Արթուր Ավանեսով**
Արվեստագիտության թեկնածու, դոցենտ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 7: Հանրակրթական հիմնական դպրոցի 7–րդ դասարանի
Ե 000 դասագիրք / Տ. Շախկույան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 120 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը
կարող եք գտնել շապիկին պատկերված
QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.
www.zangak.am/9789939990316
Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը
համապատասխան նյութերի անմիջական
հղումներն են:

ISBN 978–9939–99–031–6

© Շախկույան Տ., 2023
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ



Յուրաքանչյուր ազգ ունի իրեն բնորոշ երգերն ու պարերը, ինչպես ունի իր լեզուն, կենցաղը, խոհանոցը, սովորույթները և այլն: Հայ ազգային երգերն ու պարերն առանձնանում են ինքնատիպությամբ և բազմազանությամբ: Այս տարի ծանոթանալու եք ազգային երգ ու պարին, ճանաչելու եք դրանց տեսակները, սովորելու եք կատարել առանձին նմուշներ:

Ազգային երգն ու պարը ցույց են տալիս տվյալ ազգի դիմագիծը, էությունը, ինքնությունը. ահա թե ինչու է կարևոր դրանց իմացությունը: Դրանից զատ՝ ազգային երգն ու պարը, ինչպես և հեքիաթներն ու առասպելները, կիրառվում են դասական արվեստում՝ երաժշտության մեջ, գրականության մեջ, բեմական զանազան ժանրերում:

Օրինակ՝ Հովհաննես Թումանյանը մշակել է ժողովրդական բազմաթիվ հեքիաթներ, որոնց դուք քաջածանոթ եք: Այլ կերպ ասած՝ նրա հեքիաթների զգալի մասը ժողովրդական են: Այս իրողությունն այլ մշակույթներում նույնպես կա: Այսպես, Գրիմ եղբայրները հավաքել են բազմաթիվ հեքիաթներ, որոնց մշակումները լայն ճանաչում են ստացել ամբողջ աշխարհում: «Մոխրոտիկը», «Գորտ արքայազնը» ձեզ հայտնի են որպես Գրիմ եղբայրների հեքիաթներ, բայց դրանց հիմքում ժողովրդական մշակույթն է:

Նույնը տեղի է ունենում երաժշտության մեջ: Օրինակ՝ «Որսկան աղբեր» երգը Արամ Խաչատրյանը սովորել է մանուկ հասակում՝ Թիֆլիսի հայկական թաղամասում, որտեղ նա մեծացել է: Այս երգի մեղեդին Արամ Խաչատրյանը կիրառել է իր սիմֆոնիայում:

Իսկ ազգային պարերի տարրերը կարող են կիրառվել բալետում կամ օպերայի առանձին դրվագներում, որտեղ պար է առկա:

Այսինքն՝ ազգային երգն ու պարը ունեն ինքնաբավ գեղարվեստական արժեք, բայց միևնույն ժամանակ կարող են հիմք դառնալ դասական կամ պրոֆեսիոնալ մշակույթի համար:



Ժողովրդական Երգ Ու Պար

Ֆուկլոր նշանակում է ժողովրդական մշակույթ:

*Միաձայն նշանակում է մեկ ձայնով վերարտադրվող:
Բազմաձայն նշանակում է մեկից ավելի ձայներով
վերարտադրվող, ընդ որում՝ ձայների քանակությունը
տարբեր կարող է լինել:*

Ժողովրդական մշակույթն այլ կերպ անվանում ենք նաև **ֆուկլոր**, որը միջազգային բառ է, ուստի որպես հոմանիշներ կիրառում ենք **ժողովրդական երգ ու պար**, **ազգային երգ ու պար** և **ֆուկլորային երգ ու պար** արտահայտությունները:

Ազգային երգերն ու պարերը հորինողների անուն չեն կրում: Հորինող անհատը չի կարևորվում, որովհետև յուրաքանչյուր երգի ու պարի կենցաղավարման ընթացքում շատերն են իրենց ներդրումն ունենում դրանց կայացման մեջ: Այսպես, մեկը հորինում է, մյուսը՝ զարգացնում, երրորդը՝ հարմարեցնում իր տարածաշրջանի մշակույթին ու ապրելակերպին և այլն:

Ազգային երաժշտությունը նաև **ավանդական** է կոչվում, որովհետև ավանդվում է նախնիներից, այսինքն՝ դարեր շարունակ սերնդից սերունդ է փոխանցվում՝ պապից թոռին, հորից՝ որդուն, ավագ բարեկամից ու հարևանից՝ երիտասարդին:

Երգել են մի դեպքում ժամանցի համար (պարերգեր, քնարական երգեր, կատակերգեր), մյուս դեպքում՝ աշխատանքի ընթացքում, ծեսերին համակցված և այլն: Բայց երբեք չեն երգել, որպեսզի իրենց ունկնդրեն. այդպիսի խնդիր չի եղել:

Շատ կարևոր է ժողովրդական երաժշտության ստեղծման վայրը: Գյուղում և քաղաքում ստեղծված երգերը տարբերվում են միմյանցից: Գաղտնիքը հետևյալն է: Գյուղերում ապրել են միայն մեկ ազգի ներկայացուցիչներ: Հայկական գյուղը չունեի ուղղակի առնչություններ այլ ազգերի գյուղերի հետ, ուստի գյուղում ապ-

րում էր մաքուր հայկական երաժշտությունը: Քաղաքներում, ընդհակառակը, հարևանությամբ ապրում էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, իսկ դա նշանակում է, որ նրանց մշակույթները փոխազդում էին միմյանց վրա: Այդ պատճառով իրական հայկական երաժշտություն է համարվում հենց գյուղինը՝ գեղջկականը:

19-րդ դարում ազգային մշակույթը փնտրելու համաշխարհային շարժում էր սկսվել: Այս ժամանակ սկսեցին գիտակցել Ֆոլկլորի կարևորությունը և հետաքրքրվել դրանով: Արդյունքում գրի առան զանազան հեքիաթներ, առասպելներ, էպոսներ: Ֆոլկլորի զարթոնքի այս շարժման շնորհիվ է, որ այսօր կարող ենք կարդալ տարբեր ազգերի էպոսներ, հանրաճանաչ բազմաթիվ հեքիաթներ և այլն: Սակայն երգ ու պարի հետազոտողները դժվարացել են գտնել դրանց խորքային՝ իրական նմուշները:

Այլ կերպ ասած՝ բոլոր ազգերն էլ ունեն ազգային երաժշտություն, բայց ո՛չ բոլոր ազգերն են դրանք պահպանել: Օրինակ՝ Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան պահպանել են ժողովրդական երգ ու պարի զանազան տեսակներ, բայց կորցրել են ազգային երաժշտության խորքային շերտերը: Պատճառն այն է, որ դասական երաժշտության զարգացումը երկրորդ պլան է մղել ժողովրդական երաժշտությունը: Իսկ այն ժամանակ, երբ փորձեցին վերադարձնել ժողովրդականը, այն արդեն միայն մասամբ էր հասանելի:

Յուրաքանչյուր գյուղ կամ բնակավայր ունի իրեն բնորոշ բարբառը, հետևապես ազգային երգերում հանդիպում ենք ամենատարբեր բարբառների: Այսպես, միմյանցից շատ տարբեր են Արարատյան դաշտավայրի, Արցախի ու Սյունիքի, Վանա լճի ավազանի բարբառները: Սրանով պայմանավորված՝ դրանցից յուրաքանչյուրն ունի նաև իր երաժշտության բարբառը:

Երգերն ու պարերը կարող են ունենալ տարբերակներ՝ կախված բնակավայրից և տարածաշրջանից: Օրինակ՝ «Քոչարի» պարը առանձին տարբերով տարբերվել է Կարինում (Էրզրում), Մուշում, Սասունում և այլն: Նույն կերպ երգը տարբեր բնակավայրերում կատարում են ուրույն տարբերակներով:

Երաժշտության ձևավորումը պայմանավորվում է մի շարք գործոններով: Այդ թվում են լեզուն, կլիման, աշխարհագրությունը: Օրինակ՝ հյուսիսային և հարավային ազգերի երգեցողությունը խիստ տարբեր է, որովհետև մեկը ցուրտ, մյուսը տաք կլիմայական պայմաններում է ստեղծվում:

Աշխարհագրական դիրքը, լանդշաֆտը նույնպես կարևոր դեր է խաղում երաժշտության զարգացման համար: Այսպես, լեռներում բնակվող մարդիկ ավելի բարձրաձայն և փոքր-ինչ կոշտ երգեցողություն են ունենում, մինչդեռ դաշտավայրերում ապրողները մեղմ են երգում: Ուշադրություն դարձրեք, որ Հայոց լեռնաշխարհում լեռնային և դաշտային գոտիներն իրար հարևանությամբ են:



Ձախ կողմի նկարում Սաղմոսավանքից բացվող տեսարանն է Արագածոտնի մարզում, իսկ ներքևի նկարում՝ Լոռվա մի տեսարան: Այսպիսի լեռնային տեղակայում ունեն հայկական գյուղերից շատերը:



Ունկնդրում

Ունկնդրեք Կոմիտասի «Հով արեք» ժողովրդական երգը միաձայն՝ հենց իր կատարմամբ, ապա բազմաձայն՝ խմբերգային մշակմամբ:

Ուշադրություն դարձրեք բանահավաքի կատարմանը: Նա հնարավորինս մոտ է մնում գեղջուկի երգեցողությանը: Հիշեք, որ ձայնագրությունը կատարվել է վաղուց՝ դեռևս Փարիզում 1913 թ., երբ ձայնագրություններ կատարելու պրակտիկան նոր էր:



«Հով արեք»
ժողովրդական տարբերակ

Ունկնդրում

Իսկ հիմա լսեք նույն երգը Կոմիտասի երգչախմբային բազմաձայն մշակմամբ: Փորձեք քննարկել, թե ինչը փոխվեց: Հետևեք ձայնաբաժիններին, գույակեք, թե քանի ձայն է միաժամանակ հնչում, ապա համեմատեք խմբերգը միաձայն ժողովրդական երգի հետ:



Կոմիտաս
«Հով արեք»

• Փորձեք երգել «Հով արեք» երգը:

ՀՈՎ ԱՐԵՔ

Գրառումը Կոմիտասի

Հով ա - րեք, սա - րե՛ր ջան, հո՛վ ա - րեք, իմ դար -
դին դար - ման ա - րեք: Սա - րե - րը հով

չեն ա - նում, սա - րե - րը հով չեն ա -
 նում, իմ դար - դին դար - ման ա - նում,
 իմ դար - դին դար - ման ա - նում: Ամ - պեր, ամ -
 պեր, մի քիչ գո՛վ ա - րեք, վա - րար անձ - րև թա - վեք,
 ծո՛վ ա - րեք. զեշ մար - դու օր ա - րե -
 վը սև հո - դի տա - կով ա - րեք:

Հո՛վ արեք, ամպեր ջան, հո՛վ արեք,
 Իմ դարդին դարման արեք: -
 Ամպերը հով չեն անում,
 Իմ դարդին դարման անում:

Մարե՛ր, ծորե՛ր, դաշտե՛ր ու ջրե՛ր,
 Մարմանդ-մարմանդ վազող աղբյուրնե՛ր,
 Մի վե՛ր կացե՛ք, իմացե՛ք,
 Տեսե՛ք իմ սրտի ցավեր:

Հարցեր

- Ի՞նչ է ազգային երգ ու պարը, ինչպե՞ս կարող ենք այն այլ կերպ անվանել:
- Ի՞նչ գործոնների ազդեցությամբ է ձևավորվում ազգային երգ ու պարը:
- Ի՞նչ է նշանակում միաձայն և բազմաձայն երգեցողություն:
- Ո՞րն է գյուղում և քաղաքում ստեղծված երաժշտության տարբերությունը:

ԳԵՂՋԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԺԱՆՐԵՐԸ

Ինչպես տեսաք, բուն հայկական ժողովրդական երգը ծնվել ու կենցաղավարել է գյուղում՝ գեղջկական միջավայրում: Գեղջուկները ստեղծել են տարբեր ժանրերի երգեր՝ ըստ իրենց գործունեության տեսակի: Ամենից բնորոշ ժանրերն են.

- **քնարական երգեր**, որոնց մեջ հատկապես տարածված է բնության ու սիրո թեման,
- **պարերգեր**, որոնք երգում են պարելու ընթացքում,
- **աշխատանքային երգեր**, որոնք ուղեկցում են աշխատելու գործընթացը,
- **օրորներ և մանկախաղաց երգեր**, որոնք կապված են երեխաների, նրանց քնեցնելու, խաղացնելու հետ,
- **հարսանեկան երգեր**, որոնք կատարվում են հարսանիքի զանազան արարողությունների ընթացքում,
- այլ ծեսերի երգեր, այդ թվում՝ **Բարեկենդանի, Համբարձման, Վարդավառի,**
- **վիպերգեր**, այդ թվում՝ **էպոսի երգեր**,
- **պանդխտության երգեր և անտունիներ**, որոնք երգել են հայրենի հողը լքած, այլ վայրերում ապրուստ որոնելու մեկնած մարդիկ՝ որպես կարոտի արտահայտում:

ԿՐՈՂ ԵՎ ԲԱՆԱՀԱՎԱՔ

Կրողը ժողովրդական երգ ու պարը բնական միջավայրում սովորած և իմացող մարդն է:

Բանահավաքն այն մասնագետն է, որը հավաքում և գրի է առնում երգեր, պարեր, հեքիաթներ, ժողովրդական զրույցներ և այլն:

Բանահավաքչությունը ֆուլկլորը ժողովրդից գրառելու գործընթացն է:

Ազգային երգերը գրառում են բանահավաքչության ընթացքում: Բանահավաքն այն անձն է, որը հավաքում ու գրի է առնում ժողովրդական երգերը: Կրողն այն մարդն է, որը գիտի բազմաթիվ երգեր և պարեր, որոնք ժառանգել է ավագներից, նախնիներից:

Ժողովրդական երգն ունի կյանքի հավասարապես կարևոր երեք փուլ.

1. Այն կենցաղավարում է ժողովրդի միջավայրում, կրողները երգում և երգը պահպանում են որպես իրենց կյանքի անբաժան մաս:

2. Բանահավաքներն այցելում են ժողովրդին և հավաքում երգերը: Հավաքելու համար բանահավաքը կարող է օգտագործել թուղթ և մատիտ, որով գրի է առնում երգը, կարող է նաև կիրառել ձայնագրիչ սարք:

3. Բանահավաքի գրառած երգերին կատարողները բեմական կյանք են տալիս: Այսինքն՝ կրողից բանահավաքը երգը փոխանցում է կատարողին: Կատարողը կարող է կամ երգը հնչեցնել նույնությամբ, կամ այն կատարել մշակված տարբերակով, օրինակ՝ գործիքային ուղեկցությամբ: Բանահավաքի գրառած երգերը լայնորեն կիրառում են նաև կոմպոզիտորները, որոնք կարող են իրենց ստեղծագործությունների մեջ ընդգրկել ժողովրդական երգեր:

Բանահավաքչությունը կարող է թվալ դյուրին գործընթաց: Գուցե մենք էլ կարծենք, որ կարող էինք Կոմիտասի կամ մյուս բանահավաքների նման այցելել գյուղեր և գրառել երգեր: Սակայն սա ընդամենը թվացյալ պարզություն է: Խնդիրն առաջին անգամ նկատել է Կոմիտասը: Նա է պարզել, որ գեղջուկները իրական ժողովրդական երաժշտության այնպիսի արժեքներ ունեն, որոնց որևէ այլ տեղ հնարավոր չէ ծանոթանալ: Բայց նույն գեղջուկներն իրենց արժեքներն ի ցույց չեն դնում, և հնարավոր չէ նրանցից խնդրել երգեր կատարել ուղղակի գրառելու համար:




Այդ պատճառով բանահավաքները լուրջ ջանքեր են գործադրում մարդկանց վստահությունը գրավելու համար: Կոմիտասը հաճախ ստիպված էր լինում հատուկ հմտություններ ցուցաբերել երգեր գրառելու համար:

- Մի դեպքում նա մտնում էր գեղջուկների միջավայր և մասնակցում կենցաղին՝ աշխատանքային գործընթացին, ծեսերին, առօրյային, որպեսզի կարողանար գրառել երգեր:

- Մյուս դեպքում նա թաքնվում էր որևէ տեղ, որպեսզի գաղտնի ունկնդրեր և գրառեր երգեր:

Եղիշե Թադևոսյան (1870–1936)
«Կոմիտաս» (1936)

Հայ նկարիչ
Եղիշե Թադևոսյանի
այս կտավում
Կոմիտասը
թաքնվել է ծառի
հետևում և գրառում է
գեղջուկների երգերն
ու պարերը, որոնց
տեսնում ենք նկարի
հետին պլանում:
Նկարը պահվում է
Հայաստանի
ազգային
պատկերասրահում:



Մի անգամ Կոմիտասը թաքնվել էր ծառի փշակում և գաղտնի լսում էր, թե ինչպես էր մի աղջիկ տանիքին գործ անում ու երգում: Երգի բովանդակությունից Կոմիտասը գուշակում է, որ նա որք է: Հանկարծ տնից դուրս է գալիս մի տարիքով կին, գոռգոռում աղջկա վրա, ներս կանչում: Կարող ենք պատկերացնել, թե որքան տհաճ է եղել միջադեպը Կոմիտասի համար: Սակայն նա չի հեռացել, այլ հույսով սպասել է, որ աղջիկը նորից դուրս կգա: Այդպես էլ լինում է. ժամեր անց աղջիկը դուրս է գալիս և շարունակում իր գործը և երգը, որն էլ Կոմիտասը գրառում է:

Դուք էլ Կոմիտասի նման համբերատար կսպասե՞իք...

Ունկնդրում

Կոմիտաս Վարդապետի «Հոյ, Նազան» երգը սիրերգ է: Երգը գրառելուց հետո Կոմիտասն ինքն էլ մշակել է այն, այսինքն՝ գրել է ստեղծագործություն այդ երգի հիման վրա:

Ունկնդրե՛ք «Հոյ, Նազան» երգը Իզաբել Բայրաքդարյանի կատարմամբ, ապա փորձե՛ք երգել ինքներդ: Ձայնագրության մեջ առաջին տունը հնչում է Կոմիտասի մշակմամբ, երկրորդը՝ Սերուժ Քրաջյանի նվագախմբային մշակմամբ: Համեմատե՛ք միաձայն մեղեդին, Կոմիտասի և նվագախմբային տարբերակները: Ի՞նչ առանձնահատկություններ ունի դրանցից յուրաքանչյուրը:



«Հոյ, Նազան»

- Փորձե՛ք երգել «Հոյ, Նազան» երգը:

ՀՈՅ, ՆԱԶԱՆ

Գրառումը Կոմիտասի

Հոյ, նա՛զան իմ, նա՛զան իմ, ջա՛ն, նա՛-զան իմ, նա՛զան իմ,
 նա՛-զան, դու բա - րով ե կար, կա - նաչ սա - ըն - րով ե - կար,
 խոր-խոր ձո - ըն-րով ե - կար: Գար - նան սի - րուն ծա-ղիկ ես,
 հոյ, նա՛-զան իմ, նա՛զան իմ, ինձ հա - մար ա - դու-նիկ ես,
 ջա՛ն նա՛-զան իմ, նա՛զան իմ, զըլ - խիս վը - րով պը-տիտ տուր,
 հոյ, նա՛-զան իմ, նա՛զան իմ, նախ - շուն - թն թի - թեռ-նիկ ես,
 ջա՛ն, նա՛-զան իմ, նա՛զան իմ: Յար ջան, դու բա - րով ե - կար,
 կա - նաչ սա - ըն - րով ե - կար, խոր-խոր ձո - ըն - րով ե - կար:

*Հոյ, նա՛զան իմ, նա՛զան իմ,
 Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զանն իմ,
 նա՛զան, դու բարով կկար,
 Կանաչ սարերով կկար,
 Խոր-խոր ձորերով կկար:*

Ճամփա տվեք՝ առաջ գամ,
 Հոյ, նա՛զան իմ, նա՛զան իմ,
 Սիրած յարիս բարև տամ.
 Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զան իմ,
 Ուխտ եմ արել, որ առնեմ,
 Հոյ, նա՛զան իմ, նա՛զան իմ,
 Թող տեսնի աշխարհ ալամ:
 Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զան իմ:

*Յար ջան, դու բարով կկար,
 Կանաչ սարերով կկար,
 Խոր-խոր ձորերով կկար:*

Մարեր, ձորեր, ետ կացեք,
 Իմ յարի ճամփեն բացեք.
 Յար յարի հետ խոսելիս
 Ականջ արեք, իմացեք:

Նշի ծառին նուշ կլնի,
 Վարդի հոտն անուշ կլնի,
 Երանեկ էն աղջկան՝
 Սիրած յարին թուշ կլնի:

աշխարհ ալամ — ամբողջ աշխարհը

Հայրիկ Մուրադյանը (1905–1999) ծնվել և տասը տարի ապրել է Արևմտյան Հայաստանում՝ Վանում, որտեղ սովորել և հետագայում մեզ է փոխանցել զգալի քանակությամբ ժողովրդական երգեր: Մեծ եղեռնի օրերին հայության հետ ստիպված է եղել գաղթել, ընտանիքի հետ հասել է Իրան, ապրել է նաև Իրաքում, այնուհետև հաստատվել Հայաստանում՝ Վերին Արտաշատում: Մասնագիտությամբ պատմաբան Հայրիկ Մուրադյանը ժողովրդական երգերի տաղանդաշատ կրող և երգիչ է եղել, իսկ նրա միջոցով մեզ հասած երգերը հայ ժողովրդական երաժշտության գանձարանի բացառիկ նմուշներ են:



Հայրիկ Մուրադյան
(1905–1999)

Ունկնդրում

Ունկնդրեք և սովորեք Հայրիկ Մուրադյանի միջոցով փոխանցված «Խօրօտ խարսնիկ» երգը: Այն աղջկան ներկայացնում է բնության երևույթների նկարագրության ֆոնին գործ անելիս՝ ալյուր մաղել, էրկանքով հացահատիկ աղալ, իլիկ մանել: Երգը ստեղծվել է Արևմտյան Հայաստանի Շատախ քաղաքում, որը Վանա լճի ավազանում էր: Ուստի երգը Վանի բարբառով է: Ուշադրություն դարձրեք երգեցողության ոճին, որը մոտ է գեղջկականին:



«Խօրօտ խարսնիկ»

• Փորձեք երգել այն նաև ինքներդ:

ԽՕՐՕՏ ԽԱՐՍՆԻԿ

Ամ - ռան կյի - շեր, մար - մանդ կյի - շեր լուս - նակն ա - նուշ կը - շո - դեր,
խօ - րօտ խարս-նիկ ա - լուր մա - դեր, ջուխտ շա - մամ ծո - ցին խա - դեր:
Ամ - ռան կյի - շեր, լուս - նակ կյի - շեր շողն եր - դի - կին կը խա - դեր,
խօ - րօտ խարս-նիկ եր-կանքյ ա - դեր, տես - նո - դի սըր - տիկ դա - դեր:

Ամռան կյիշեր, մարմանդ կյիշեր
Լուսնակն անուշ կը շողեր,
Խօրօտ խարսնիկ իլիկ մաներ՝
Ուրախ երգեր, ծիծաղեր:

Ամռան կյիշեր, լուսնակ կյիշեր
Շողն երդիկին կը խաղեր:
Խօրօտ խարսնիկ, բերդի լուսնակ,
Չուր ե՛փ մնաս ամբի տակ:

կյիշեր — գիշեր
խարսնիկ — հարսիկ
շամամ — քաղցրահամ սեխի տեսակ
երկանքյ — երկանք, հացահատիկ ծեծելու գործիք
չուր ե՛փ — մինչև ե՛րբ

Հարցեր և առաջադրանքներ

- Ինչ է բանահավաքչությունը: Ինչպե՞ս է այն իրականացվում:
- Ինչպե՞ս և որտե՞ղ են օգտագործում բանահավաքների գրանած երգերը:
 - Պարզաբանեք կրող, բանահավաք, կատարող բառերի էությունը:
 - Հորինեք այնպիսի իրադրություն, երբ դուք այցելել եք որևէ գյուղ կամ այլ փոքր բնակավայր և պետք է հավաքեք երգեր: Ինչ մեթոդի կդիմեք: Ինչպե՞ս հնարամիտ քայլով կգրառեք երգերը: Փորձեք իրադրությունը խաղալ դասընկերներով:
 - Հորինեք այնպիսի իրադրություն, երբ դուք ապրում եք գյուղում, երգերի կրող եք, և ինչ-որ մեկը եկել է ձեզանից երգ գրառելու: Ինչպե՞ս կվարվեք: Փորձեք իրադրությունը խաղալ դասընկերներով:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐ. ԳՅՈՎՆԴ ԵՎ ՎԵՐՎԵՐԻ

*Գյովնդը և վերվերին հայ ազգային
պարատեսակներ են:
Այլ պարատեսակներ են քոչարին, թամզարան,
շորորը և այլն:*

Ազգային երգին զուգահեռ գոյություն ունի նաև ազգային պար, որը ստեղծել, պահպանել ու իր ամենօրյա կյանքում կիրառել է ժողովուրդը: Ինչպես երգում, պարում ևս չի կարևորվում ստեղծողը, որովհետև մեկը պարաքայլ է կատարում, մյուսն ընդօրինակում ու զարգացնում է, իսկ արդյունքում համայնքում պարում են բոլորը:

Ամենից տարածված պարաձևը հայ իրականության մեջ եղել է շորջպարը՝ խմբական երգ-պարը, որին մասնակցել են բոլորը՝ կանայք ու տղամարդիկ, ավագներն ու երիտասարդները: Պարել են բակերում, կալերում, ուխտավայրերում, կտուրներում և մեծաթիվ հանդիսականների ներկայությամբ:

Հատկապես տարածված են եղել պարերգերը, այսինքն՝ պարի և երգի համակցումը: Դրանք երգում են մենակատար-խումբ սկզբունքով: Խումբը երգում է կրկնակը, իսկ մենակատարը՝ տները: Կրկնակը, որը շատ կարևոր դեր ունի պարերգի մեջ, թռիչքներին ու պարաքայլին համապատասխան բացականչություններ է ներկայացնում («ջան իման», «լե, լե», «լե ջան»): Ձեզ արդեն ծանոթ «Հոյ, Նազան» երգի կրկնակն է՝ «Հոյ, Նազան իմ, Նազան իմ, ջան, Նազան իմ, Նազան իմ»:

Կրկնակը ամրագրված կառուցվածք է, իսկ մնացած տները՝ խաղիկները, ազատ են: Դրանք հաճախ երգում են՝ փոխառելով ուրիշ երգերից ծանոթ ու հիշողության մեջ տպավորված քառյակներից, որոնցից յուրաքանչյուր գյուղացի իմացել է մի քանի տասնյակ: Ուստի նույն տեքստը կարող է «թափառել» տարբեր երգերում:

Պարերգերի բնույթը հիմնականում կենսուրախ է: Կառուցվածքով պարզ են, բայց բովանդակությամբ կարող են վերարտադրել մինչև անգամ փիլիսոփայական մտքեր: Օրինակ՝

*Սարեն կուգա ջուխտըմ դոչ,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Մինը փընջած, մինը՝ ոչ,
Յան, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Աստված, քու դատին մեռնեմ,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Մինին կուտաս, մինին՝ ոչ,
Յան, նայ, նայ, նայ, նայ, նայ:*

Ունկնդրում

Սովորե՛ք «Մեր տան հիտեվ» պարերգը, որը Վանի երգ է և մեզ փոխանցվել է Հայրիկ Մուրադյանի միջոցով:



«Մեր տան հիտեվ»

ՄԵՐ ՏԱՆ ՀԻՏԵՎ

Մեր տան հի-տեվ արտ կո - ըրն-գյան, լե, լե, լե, լե, լե, լե, ջան,

ծեր տան հի - տեվ արտ կո - ըրն-գյան, լե, լե, լե, լե, լե, լե, ջան:

Ծիանքյ ինի կիրխնջան,
Լ, լ, լ, լ, լ, լ, ջան,
 Հավար տարեքյ տեկյեր կնգյան,
Լ, լ, լ, լ, լ, լ, ջան,
 Թըղ ծեռ զարկի վըր ուր ծնգյան,
Լ, լ, լ, լ, լ, լ, ջան,
 Թըղ խտվտա ծեռաց մարջան,
Լ, լ, լ, լ, լ, լ, ջան:

Առնուսա սար ցանած կյարին,
Լ, լ, լ, լ, լ, լ, ջան,
 Առտուսա սար ցանած կյարին,
Լ, լ, լ, լ, լ, լ, ջան,
 Կյարին տանիմ տամ խնձորի,
Լ, լ, լ, լ, լ, լ, ջան,
 Խնձոր հորոխկիմ դիյարի,
Լ, լ, լ, լ, լ, լ, ջան:

հիտեվ — հետևում
 կորնգյան — բուսատեսակ
 ծիանքյ — ձիերը
 ինի — այնտեղ
 հավար — օգնության կանչ
 տեկյեր կնգյան — տեգոր կնոջը
 ծեռ — ձեռք

վըր ուր ծնգյան — ծնկի վրա
 ծեռաց — ձեռքի
 Առնուսա սար և Արտուսա սար — սարեր
 Արևմտյան Հայաստանում
 կյարին — գարի
 հորոխկիմ — ուղարկեմ
 դիյարի — նվեր, ընծա

Առաջադրանք

Որոշե՛ք «Մեր տան հիտև» երգի կրկնակը, ապա՝
 խաղիկները:

Փորձե՛ք երգը կատարել գյովնդ պարի ուղեկցությամբ:

Դիտե՛ք գյովնդ պարի վերաբերյալ տեսանյութը Գագիկ
 Գինոսյանի մեկնաբանությամբ:



«Գյովնդ». ուս ուսի

Գյովնդը և վերվերին հայ իրականության մեջ պարել են տևականորեն՝ տարբերակումներով զարգացնելով մինչև անգամ ժամեր: Պարաշոջանին մասնակցել են բոլորը: Պարը սկսել են դանդաղ՝ գյովնդով, հետո փոքր-ինչ արագացրել են և պարել միջին տեմպով վերվերի, իսկ այնուհետև անցել են վերվերի պարի արագ տեմպով տարբերակին:

Առաջադրանք

Դիտե՛ք վերվերի պարի վերաբերյալ տեսանյութը:



«Վերվերի». ուս ուսի

• Սովորե՛ք Կոմիտասի «Արևը կայնե կեսօր» պարերգը:

ԱՐԵՎԸ ԿԱՅՆԵ ԿԵՍՕՐ

Մշակումը Կոմիտասի

Ա - րե - վը կայ - նե կես - օր, դե՛ քե - լե, դե՛ քե - լե, յա - րո ջան,

իմ յա - րը կու - գա էս - օր, դե՛ քե - լե, դե՛ քե - լե, յա - րո ջան,

իմ յա - րի գա - լած ճամ - բեն, դե՛ քե - լե, դե՛ քե - լե, յա - րո ջան,

կը - ցա - նեմ կար - միր մա - սոր, դե՛ քե - լե, դե՛ քե - լե, յա - րո ջան:

Ջան յարո, բարո՛վ եկար,
Դե՛, քեկե, դե՛ քեկե, յա՛րո ջան,
 Ո՛ր արտով, ջարով եկար,
Դե՛, քեկե, դե՛ քեկե, յա՛րո ջան,
 Ես մեկ օր չէի տեսել՝
Դե՛, քեկե, դե՛ քեկե, յա՛րո ջան,
 Ա՛խ, կարծես տարով չեկար:
Դե՛, քեկե, դե՛ քեկե, յա՛րո ջան:

Մեր բաղում կա չինարի,
 Ե՛կ, երթանք, ինձ հետ արի՛,
 Դու տխրակ, ես վարդենի,
 Տա՛ղ ասա, թփին թառի:

- Որոշէ՞ք երգի կրկնակը, ապա՝ խաղիկները:
- Փորձէ՞ք երգը կատարել վերվերի պարի ուղեկցությամբ:

Թամզարա պարերգը նույնպես շատ տարածված է հայ ազգային մշակույթում: Թամզարա բառի ստույգ ծագումը հայտնի չէ. այդ անունով բնակավայր է եղել Արևմտյան Հայաստանում: Գոյություն է ունեցել նաև աղջկա անուն: Թամզարա պարերգի տարբերակներ են գրառվել շատ տարբեր բնակավայրերում:

ԹԱՄԶԱՐԱ

Տղա 

Աղջիկ 

Տղա 

Աղջիկ 

Տղա 

Աղջիկ 

Տղա 

Աղջիկ 

Sոյս
 Աղ - ջի, ծա - մըղ ծի - րա - նի,
 Աղ - ջի, դու լուս - նակ ե - չես,

Խումբ
 Թամ - զա - րա, հայ, թամ - զա - րա,
 Թամ - զա - րա, հայ, թամ - զա - րա,

Sոյս
 Քա - մին տա, թել - թել ա - նի,
 Ինչ կըլ - նի ին - ձի սի - ըես,

Խումբ
 Ինչ բան ա - սես, հը - մեն կա,
 Ինչ բան ա - սես, հը - մեն կա,

Աղջիկ
 Կա - ըավ թը - ռավ մեր աք - տեն,
 Գա - թուն ե - կավ ու զը - նաց,

Խումբ
 Թամ - զա - րա, հայ, թամ - զա - րա,
 Թամ - զա - րա, հայ, թամ - զա - րա,

Աղջիկ
 Կրտ - ըավ իմ խա - դի դայ - դեն,
 Հուրն ըն - կավ սիր - տըս, մը - նաց,

Խումբ
 Թամ - զա - րա, հայ, թամ - զա - րա:
 Թամ - զա - րա, հայ, թամ - զա - րա:

Sոյս
 Այ է - դի - նը, է - դի - նը,
 Ին - ձի չհավ - նող աղ - ջի - կը

Ծուն - կա առ - նեմ գե - տի - նը.
 Սաղ - սաղ մըտ - նի գե - տի - նը,

Աղջիկ
 Էր - թիկ, էր - թիկ կայ - նել ես,
 Հե - թըս թեզ աղ - ջիկ չի տա,

Էր - թըն - կա - փեսա բըռ - նել ես,
 Ի - գուր թը - նեղ կըտ - ըել ես:

Առաջադրանք

Փորձե՛ք վերարտադրել թամզարա պարերգի ռիթմը՝ զարկերի կամ ծափերի միջոցով՝ 4+2+3 չափով, որտեղ ուժեղ զարկեր են յուրաքանչյուր թվի առաջին միավորները:

Դիտե՛ք պարի վերաբերյալ տեսանյութը, ապա փորձե՛ք «Թամզարա» երգը վերարտադրել պարի համակցությամբ:




«Թամզարա». ուս ուսի

ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ

Ծիսական են կոչվում այն ժողովրդական երգերն ու պարերը, որոնք ուղեկցում են կենցաղի մեջ արմատավորված զանազան ծիսական արարողությունները, սովորույթները:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

Հարսանեկան երգերն անվանում են նաև **կենաց ծառի երգեր**:



Ավանդական հարսանիքը տևում էր մի քանի օր: Մասնակցում էր ամբողջ գյուղը: Այն ուղեկցվում էր երգերով, պարերով, խաղերով: Նման էր թատերականացված ներկայացման, որտեղ մասնակիցներից ամեն մեկն իր դերն ուներ: Հարսն ու փեսան գլխավոր գործող անձինք էին, որոնց անվանում էին թագավոր և թագուհի: Այլ «գործող անձինք» են հարսի ու փեսայի ծնողները, ընկեր-ընկերուհիները, քահանան, խաչեղբայրը, հարսնա-

քույրը և այլն: Նրանք բոլորը իրենց «պարտականությունները» կատարելիս երգում էին:

Ժողովրդական երաժշտության մեջ բազմաթիվ են հարսին ու փեսային նվիրված երգերը: Գովերգել են նրանց գեղեցկությունը, երիտասարդությունը, արժանիքները: Նրանց նմանեցրել են արևի, լուսնի, բնության տարբեր հրաշալիքների, ծառի ու ծաղկի, կանաչ տերևով վարդի, մաղթել են «կանաչ արև ու կարմիր պսակ»: Կանաչ գույնը խորհրդանշել է երիտասարդություն, երկար կյանք, իսկ կարմիրը՝ ուժ, զորություն ու երջանկություն:

Հարսանիքի ընթացքում օրհնանքներ, գովեստներ, բարեմաղթանքներ, աղոթքներ են ասել և երգել՝ վստահ լինելով, որ դրանք ապահովում են նոր հիմնվող ընտանիքի բարեկեցությունը:

Հարսանեկան երգերի մեջ ուրույն տեղ ունեն հարց ու պատասխանի ձևով երգվող հանելուկները, որոնց միջոցով ներկայացնում են հարսանիքի հյուրերին: «Էն դիզան» հնագույն ծիսական երգի մեջ փեսային ու հարսին թագավոր ու թագուհի են բնորոշում: Այսպես, երգի մեջ հարցնում են, թե երկնքի արևն ով է, և պատասխանում, որ թագավորն է, ապա հարցնում են, թե ամպերի մեջ լուսինն ով է, և պատասխանում, որ թագուհին է: Իսկ հյուրերը հաճախ ներկայացվում են կատակային-ծաղրական պիտակով: Հարցնում են. «Ճընճըղներ ճըվըլլալեն, տեսեք էն դրն է», և պատասխանում են, որ տիրացուներն են: Կամ հարցնում են՝ «Շունն եկավ, պարկն ի բերան, տեսեք էն դրն է», և պատասխանում են, որ գյուղի գզիրն է: Իսկ պոչն ալյուրոտ մուկը ջաղացպանն է: Այսպիսի ծաղրական համեմատությունները հանելուկ-երգերում շատ տարածված են: Ոչ ոք իրավունք չունի վիրավորվելու այս համեմատություններից, անգամ գյուղապետը, քահանան և այլն:

Ունկնդրում

Ունկնդրեք «Էն դիզան» երգի կոմիտասյան մշակումը Հայաստանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ: Ուշադրություն դարձրեք երգի «գործող անձանց» ու նրանց համեմատություններին:

Կոմիտաս
«Էն դիզան»



ԷՆ ԴԻԶԱՆ

Գրառումը Կոմիտասի



Էն դի - զան, բետ - բետ դի-զան, տե - սեք էն ո՞րն է:



Էն դի-զան, բետ - բետ դի - զան՝ զե - դի ռես-ներն է:

Ճնճղներ ճվլալեն՝ տեսեք էն ո՞րն է:

Ճնճղներ ճվլալեն՝ էն տիրացուքն է:

Էն արև, երկնուց արև, տեսեք էն ո՞րն է:

Էն արև, երկնուց արև՝ մեր թագավորն է:

Էն լուսին ամպերի մեջ, տեսեք էն ո՞րն է:

Էն լուսին ամպերի մեջ՝ մեր թագուհին է:

• Փորձե՛ք գտնել նույն ժանրին պատկանող այլ երգեր ևս, որոնք հայկական մշակույթում բազմաթիվ են: Արդյո՞ք բանաստեղծական տեքստի մեջ հանդիպող համեմատությունները կրկնվում են: Գտե՛ք նմանություններ ու տարբերություններ:



Սարգիս Մուրադյան
(1927–2007)
«Հարսանիք
Հրազդանում» (1960)

Հարսանիքի ողջ ընթացքում մեծ բաժին են կազմում պարերն ու պարերգերը:

«**Զար, զընգը**» պարերգը, որը գրառել և մշակել է Կոմիտասը, կատարել են նաև հարսանիքի ժամանակ:

ԶԱՐ, ԶԸՆԳԸ

Գրառումը Կոմիտասի

Զար, զըն-գը, զար, զըն-գը, թող զըն - գա. պա - րենք զի - շեր

լու - սըն - կա. - կա: Էս զի - շեր, լուս - նակ զի - շեր,

զար, զըն-գը, զար, զըն-գը, թող զըն - գա. ձունն է - կեր՝ զե -

տին նախ - շեր. զար, զըն-գը, զար, զըն-գը, թող զըն - գա.

է - լի պա - րը բո - լո - ռավ. զար, զըն-գը, զար, զըն-գը, թող զըն - գա.

յա - րըս մի - ջին մո - լո - ռավ: Պա - րենք զի - շեր լու - սըն - կա:

• Զանազանեք կրկնակն ու խաղիկները: Արդյո՞ք բանաստեղծական տեքստն ուղղակիորեն առնչվում է հարսանիքի ծեսին: Սովորե՞ք երգել այն:

Շավալի պարը կատարել են հարսի բարեկամները: Հարսանիքի ընթացքում հարսի կողմը համեմատաբար պասիվ է եղել, և միայն հարսանիքի որոշակի դրվագում հայտարարել են, որ խնամիներն են պարում, ապա բոլոր ներկաները հետ են քաշվել՝

պարահրապարակը զիջելով նրանց: Շավալի պարի շարժումները վերարտադրում են տոհմի մեծարանքը, նախնիների հիշատակումը և նոր կյանքի փառաբանումը:

Հայկական պարերում պարաքայլերը սովորաբար դեպի աջ են ընթանում՝ խորհրդանշելով առաջ գնալը և հաջողությունը: Ձախ գնացող պարաքայլերն ավելի քիչ են և սովորաբար հավասարակշռվում են դեպի աջ գնացողների հետ: Օրինակ՝ գյովնդ և վերվերի պարերի պարաքայլերը երկու աջ և մեկ ձախ պարաքայլերից են բաղկացած, ինչի արդյունքում պարն ընդհանուր առմամբ դեպի աջ է գնում: Իսկ դեպի ձախ պարաքայլերի գերակշռություն ունեն մահ և ավարտ խորհրդանշող պարերը:

Շավալի պարը զարմանալիորեն սկսվում է դեպի ձախ պարաքայլով, և սա յուրահատուկ բացատրություն ունի: Ձախընթաց քայլը խորհրդանշում է աղջկա «մահը», որովհետև նա պիտի հարություն առնի նոր կերպարով՝ արդեն իր նոր տանը՝ որպես ընտանիքի պահապան, որպես բարօրություն ապահովող կարևորագույն անձ:

Առաջադրանք

Դիտե՛ք շավալի պարի վերաբերյալ տեսանյութ.

Փորձե՛ք կատարել պարը.



«Շավալի». ուս ուսի



ԾՆՆԴՅԱՆ ԵՐԳԵՐ ԿԱՄ ԱՎԵՏԻՍՆԵՐ

Քրիստոսի ծնունդին նվիրված երգերը կոչվում են **ավետիսներ**: Ավետիս բառը նշանակում է բարի լուր: Ավետիսներում պատմում են Քրիստոսի ծնունդի, Մարիամի, մկրտության մասին, գովերգում են այն տունը, որի բակում երգում են ավետիսը: Այս երգերը կատարել են տնետուն շրջող և ծիսական նվիրատվություն հավաքող երեխաները և երիտասարդները: Ավետիսներ են երգվել նաև Զատիկին:

Ավետիսներ գոյություն ունեն թե՛ հոգևոր, թե՛ ժողովրդական երաժշտության մեջ:

ԱՎԵՏԻՍ

Ա - մեն տա - րի հաս - նինք բա - րով, ա - վե - տիս,
եր - կար կյան - քով, ա - ռողջ ան - ձով, ա - վե - տիս:

Մի՛ կենաք հետ մարդու խռով, ավետիս,
Եվ մի՛ նայիք խիստ խոժոռով, ավետիս,
Ողորմություն արեք սիրով, ավետիս,
Եվ խոսեցե՛ք անուշ լեզվով, ավետիս,
Որ մենք գձեզ օրհնենք սիրով, ավետիս,
Որ դուք մնաք երկար ամով, ավետիս,
Ձեր հեռավորք գային շուտով, ավետիս,
Եվ ձեր ոչխարն՝ հոտերով, ավետիս,
Կարասը ձեր լցվի գինով, ավետիս,
Եվ տունը ձեր՝ շեն բարիքով, ավետիս:

ԲԱՐԵԿԵՆՂԱՆԻ ԵՐԳԵՐ

Բարեկենդանի տոնը նախորդում է Մեծ պահքին: Այս օրը առանձնահատուկ դեր է ունեցել հայ մշակույթում, եղել է ամենից սպասված ժողովրդական տոներից մեկը: Ճոխ սեղաններ են գցել, թատերականացված ներկայացումներ անցկացրել, զանազան խաղեր խաղացել, տոնել ու անմնացորդ ուրախացել՝ այդպիսով պատրաստվելով պահքին: Բնական է, որ երգն ու պարն էլ հատուկ տեղ են ունեցել տոնի ընթացքում:

«Գացեք, տեսեք» կատակերգը Բարեկենդանի բնորոշ նմուշներից է: Երգում են երկխոսության ձևով. մեկն ասում է, մյուսը՝ պատասխանում: Երգի մեջ հիշատակվում են տարբեր կենդանիներ, որոնք խորհրդանշական իմաստ ունեն և կապվում են տարվա ամիսների հետ:

ԳԱՅԵՔ, ՏԵՍԵՔ



Գացեք, տեսեք, ո՞րն է կերել էձ,
Գացինք, տեսանք՝ գելն է կերել էձ,
Մուլթուլուսին,
Գելը՝ էձին,
Էձը՝ թփին,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Չատիկ:

Գացեք, տեսեք, ո՞րն է կերել գել,
Գացինք, տեսանք՝ արջն է կերել գել,
Մուլթուլուսին,
Արջը՝ գելին,
Գելը՝ էձին,
Էձը՝ թփին,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Չատիկ:

Գացեք, տեսեք, ո՞րն է կերել արջ,
Գացինք, տեսանք՝ թուրն է կերել արջ,
Մուլթուլուսին,
Թուրը՝ արջին,
Արջը՝ գելին,
Գելը՝ էծին,
Էծը՝ թփին,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Չատիկ:

Գացեք, տեսեք, ո՞րն է կերել թուր,
Գացինք, տեսանք՝ ժանգն է կերել թուր,
Մուլթուլուսին,
Ժանգը՝ թրին,
Թուրը՝ արջին,
Արջը՝ գելին,
Գելը՝ էծին,
Էծը՝ թփին,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Չատիկ:

Գացեք, տեսեք, ո՞րն է կերել ժանգ,
Գացինք, տեսանք՝ ջուրն է կերել ժանգ,
Մուլթուլուսին,
Ջուրը՝ ժանգին,
Ժանգը՝ թրին,
Թուրը՝ արջին,
Արջը՝ գելին,
Գելը՝ էծին,
Էծը՝ թփին,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Չատիկ:

Գացեք, տեսեք, ո՞րն է կերել ջուր,
Գացինք, տեսանք՝ հողն է կերել ջուր,
Մուլթուլուսին,
Հողը՝ ջրին,
Ջուրը՝ ժանգին,
Ժանգը՝ թրին,
Թուրը՝ արջին,
Արջը՝ գելին,
Գելը՝ էծին,
Էծը՝ թփին,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Չատիկ:

x...x Յուրաքանչյուր տան մեջ նշված տակտը կրկնել ըստ բանաստեղծական ավելացող տողերի: Պետք է արագացնել նաև տեմպը:



ՀԱՄԲԱՐԾՄԱՆ ԵՐԳԵՐ

Աստվածաշնչի համաձայն՝ Քրիստոսը հարություն առնելուց հետո քառասուն օր մնաց երկրի վրա, հետո երկինք համբարձվեց: Այս իրադարձության օրը նշվում է Համբարձման տոնը, որը կատարվում է մայիս ամսին: Նախաքրիստոնեական ժամանակներում տոնը նվիրված է եղել բույսերի և կենդանիների հովանավոր, հայոց մայր աստվածուհի Անահիտին:

Ըստ ժողովրդական հավատալիքների՝ Համբարձման գիշերը բույսերն իրար հետ զրուցում են, ջրերը ակնթարթորեն կանգ են առնում և գերբնական զրոություն են ստանում: Եթե կանգ առած ջրի մեջ որևէ առարկա գցեն, այն ոսկի կդառնա և բուժիչ հատկություններ կունենա:

Համբարձման տոնին երգում են **վիճակի երգեր**: Վիճակ նշանակում է բախտ: Համբարձմանը հնուց ի վեր գուշակություններ են արել՝ որոշելու համար ապագա բերքը: Հետագայում փոխվել է գուշակությունների բնագավառը. այն վերածվել է չամուսնացած աղջիկների բախտը գուշակելու ծեսի:

Համբարձման նախորդ օրը չամուսնացած աղջիկները սափորով յոթ աղբյուրից լռությամբ ջուր էին հավաքում, յոթ տարբեր տեսակի ծաղիկ էին քաղում և գուշակության ծաղկեփունջ կազմում: Փունջը դնում էին սափորի մեջ: Գուշակությանը մասնակցել ցանկացող յուրաքանչյուր աղջիկ իր անձը ներկայացնող որևէ փոքր իր էր գցում սափորի մեջ՝ մատանի, ականջօղ, կոճակ, մետաղադրամ և այլն: Գիշերը սափորը թաքցնում էին դաշտում, թփերի մեջ, որ լուսնի լույսի ազդեցությամբ ուժեղանա ծաղիկների մոգական հատկությունը: Սափորը տղաներից թաքուն էին պահում, այլապես նրանք կարող էին գողանալ այն և փրկագին պահանջել:



Գուշակությունների սափոր



Համբարձման տոնի տեսարանը Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից, որը հիմնվում է Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի վրա: Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն

Հաջորդ օրն սկսվում էր գուշակությունը, որին մասնակցում էին միայն աղջիկները: Սափորի մոտ քողով դեմքը ծածկած մի աղջիկ էին նստեցնում: Ղեկավար աղջիկը վիճակի երգ էր երգում՝ բախտ գուշակող որոշակի բովանդակությամբ, ապա սափորի մոտ նստած աղջիկը որևէ իր էր հանում սափորից, և վիճակի երգի բովանդակությունը վերագրվում էր տվյալ իրի տիրոջ ապագա բախտին:

Վիճակի երգերը փոքրիկ քառատողեր են, որոնց տեքստերի թեմատիկան բազմազան է՝ սեր, գորով, բաժանում, կարոտ, սպասում, բերկրանք, տխրություն, կատակ, ծաղր և այլն:

• Սովորեք Կոմիտասի գրառած վիճակի երգերից մեկը:

ԾԱՂԻԿ ՈՒՆԵՄ ՆԱՐՆՋԻ

Գրառումը Կոմիտասի

Ծա - դիկ ու - նեմ նա - րնջ - ջի, ջա՛ն, ծա - դիկ, ջա՛ն, ջա՛ն,
այ տը - դա, վեր ա - թի փըն - ջի, ջա՛ն, վի - ճակ, ջա՛ն, ջա՛ն,
իմ մե - րը քեզ աղ - ջիկ չի տա, ջա՛ն, ծա - դիկ, ջա՛ն, ջա՛ն,
քա - նի ման գաս դու յա - վըն - ջի, ջա՛ն, վի - ճակ, ջա՛ն, ջա՛ն:

Ես աղջիկ եմ, ալ կուգեմ,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Ոսկին էլ ծալեծալ կուգեմ,
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն,
Երբ որ իմ յարի տուն երթամ,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Գոտկըս էլ քիրման կուգեմ:
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:

ՎԱՐՂԱՎԱՌԻ ԵՐԳԵՐ

Վարդավառը՝ Քրիստոսի պայծառակերպության տոնը, կապված է ջրի պաշտամունքի հետ: Նախաքրիստոնեական շրջանում այդ տոնը նվիրված էր ջրերի աստվածուհի Աստղիկին և պտղաբերության աստվածուհի Անահիտին:

Սիրված և տարածված տոներից մեկն է, որի ժամանակ ուխտի են գնում սրբավայրեր: Երիտասարդներն իրար վրա ջուր են լցնում (նախկինում վարդաջուր են լցրել)՝ որպես երկար կյանքի և բարօրության մաղթանք: Հնում այդ օրն ընդունված էր սպիտակ աղավնիներ թռցնել, որոնք խորհրդանշում էին անաղարտություն, գեղեցկություն:



Վարդավառի
տոնակատարություն

• Սովորե՛ք Կոմիտասի գրառած և մշակած «Սո՛նա յար» պարերգը, որը վերաբերում է Վարդավառի տոնին:

ՍՈՆԱ ՅԱՐ

Գրառումը Կոմիտասի

Սո՛ - նա յար, Սո՛ - նա յար, Սո՛ - նա սի - բուն, Սո՛ - նա յար:

Վար - դա - վա - ռը գա - լիս ա, Սո՛ - նա յար, Սո՛ - նա յար,
 այ գյու - լում կան - չող աղ - ջիկ,

ծա - դի - կը ցըն - ծա - լիս ա, Սո՛ - նա սի - բուն, Սո՛ - նա յար:
 ձե - նըդ ծըլ - վը - լա - լիս ա:

Սո՛ - նա յար, Սո՛ - նա յար, Սո՛ - նա սի - բուն, Սո՛ - նա յար:

Կա - նաչ տե - դը բա - դում եմ, Սո՛ - նա յար, Սո՛ - նա յար,
 կա - բա - վի պես սու - բա - լով

պա - րի մի - ջին խա - դում եմ, Սո՛ - նա սի - բուն, Սո՛ - նա յար:
 տը - դա - նե - բին դա - դում եմ:

*Սո՛նա յար, Սո՛նա յար,
 Սո՛նա սիրուն, Սո՛նա յար:*

Տղա. Կարմիր գինին թասումը,
Սո՛նա յար, Սո՛նա յար,
 Ես եմ քո հավատումը,
Սո՛նա սիրուն, Սո՛նա յար:
 Ե՛րբ կըտաքնան աղջկեքք, -
Սո՛նա յար, Սո՛նա յար,
 Վարդավառի պասումը:
Սո՛նա սիրուն, Սո՛նա յար:

Աղջիկ. - Հայ, ասի՛ նա, ասի՛ նա,
 Կարմիր գինին թասին ա .
 Տըղե՛ք երբ կըկոտորվին, -
 Հորթաթողի պասին ա:
Տղա. Սիրո՛ւն աղջիկ, նազ ունիս,
 Շահագոյայի սազ ունիս .
 Հողեմ շահագոյի գըլուխ,
 Դու իմ հոգում հազ ունիս:

հորթաթող — հորթերը թողնելը, արածելու չտանելը
 շահգաղա — արքայազն, շահի որդի
 սազ — պատշաճություն, սազականություն

Հարցեր և առաջադրանքներ

- Ինչ է ծեսն ու ծիսական երաժշտությունը:
- Արդյո՞ք ծեսերի ընթացքում երգել կամ պարել են: Ինչո՞ւ:
- Քննարկե՞ք տարբեր ծեսերի բնույթն ու դրանց ընթացքում կատարվող երգերի ոճական տարբերությունները: Ձեր սովորած երգերը ձեզ կօգնեն բնութագրելու դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ

*Հռոովելները կամ հորովելները հողագործության կամ երկրագործության հետ կապված երգեր են:
Քաղհանը դաշտը անպիտան խոտերից ու բույսերից մաքրելն է:
Կալսելը բերքահավաքից հետո նյութերը վերամշակելն է:*

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԳԵՐ


Աշխատանքային երգերը ստեղծվում և երգվում են որևէ աշխատանքի ընթացքում՝ հունձի, կալսի, սանդ ծեծելու և այլն: Աշխատանքի յուրաքանչյուր տարատեսակ ունի իրեն հատուկ երգերը, որոնք տարբերվում են թե՛ բնույթով, թե՛ բանաստեղծական տեքստի կառուցվածքով, թե՛ երաժշտական ոճով: Աշխատանքի մի տարատեսակի երգը մյուսի ժամանակ չի երգվում և գեղջուկի համար գոյություն չունի աշխատանքից դուրս:

Գյուղում կատարվող աշխատանքը երկու հիմնական մասի է բաժանվում.

- երկրագործական աշխատանք,
- առտնին, այսինքն՝ տան տարածքում կատարվող աշխատանք:

Երկրագործական աշխատանքը և դրա հետ կապված երգերը գլխավորապես կատարում են տղամարդիկ, իսկ առտնին երգերը կանանց աշխատանքային երգեր են: Երկու դեպքում էլ աշխատանքի ընթացքում երգելը նպատակ ունի թեթևացնելու գործի հոգեբանական և ֆիզիկական ծանրությունը: Երգերի մեջ դրսևորվում է աշխատանքի բնույթն ու ռիթմը:

Երկրագործական երգեր: Երկրագործական աշխատանքի հետ կապված երգերը ստացել են **հոռովել** անվանումը: Դրանք կոչվում են նաև շինականի երգեր: Հոռովելները երգել են հողը գութանով վարելու ընթացքում, իսկ հետագայում սկսել են նույն կերպ անվանել բոլոր երկրագործական երգերը: Գութանին լծում էին եզներ կամ գոմեշներ, որոնք քաշում էին գութանը, և փաստորեն նրանց ուսերին էր ընկնում աշխատանքի հիմնական ֆիզիկական ծանրությունը:



Մարտիրոս Սարյան
(1880–1972)
«Արագած» (1925)

Այս կտավում տեսնում ենք գութանով կատարվող աշխատանքը:

Գութանը հողը հերկելու համար նախատեսված աշխատանքային գործիք է, որին լծված եզներն ու զոմեշներն են իրենց հետևից գութանը քաշելու միջոցով հերկել հողը:

Հոռովել (կամ հորովել) բառը ծագել է «հո՛» բացականչության և «առավել» բառի համակցումից: Առավելը տարբեր տնտեսությունների պատկանող հողատարածքները միմյանցից առանձնացնող փոքր հողատարածք էր, որը ոչ որի չէր պատկանում և չէր հերկվում: Այդ տարածքում կենդանիները հանգստանում էին: Հոռովելներում հաճախ է հողագործ-երգողը դիմում կենդանիներին ու շեշտում, որ առավելն արդեն երևում է, և շուտով հասնելու են այնտեղ: Դրանով նա հուշում է, որ կենդանիները շուտով աշխատանքն ավարտելու են ու հանգստանան:

Հոռովելների առանձնահատկություններից է երկրագործական գործիքները գովաբանելը: Գութանն առանձնահատուկ պատվի է արժանացել.

*Աշխարհի շէն վէր կյութնին էր,
կյութան չէլներ, աշխարհն ինչ էր:*

Հոռովելների բանաստեղծական տեքստում լայն կիրառություն ունեն բազմազան բացականչությունները, ինչպես, օրինակ, **հո՛, հոռուլո՛, հոլե՛լ, հե՛-հե՛, հոռո լո՛-լո՛, էոա՛** և այլն:

Հաճախակի են հնչում կենդանիներին փաղաքշող խոսքերը. «ախպեր ջան», «սիրուն ջան», «ծաղիկ», «ծիրան», «քե՛ մատաղ», «ուսի՛դ մատաղ» և այլն:

Իսկ երաժշտական լեզուն բարդ է ու կառուցվածքով ազատ՝ համապատասխան աշխատանքի ազատ բնույթին: Հորովելները մենակատարային երգեր են, ոչ թե խմբային: Խմբով աշխատելիս երգել են փոխկանչերով:

Կոմիտասի գրառած «Հո՛լ արա, եզո՛» երգը ցայտուն արտահայտում է տղամարդկանց աշխատանքային երգերի ձևը և ոճը:



ՀՈՒ ԱՐԱ, ԵԶՈ

Գրառումը Կոմիտասի

Հոյ ա-րա, ե-զո, ջան, ախ - բեր ջան, հո՛, թոյ ա-րա, ե-զո,
ջան ախ - բեր, դե սի-րուն, ե՛ն, ե՛ն, ե՛ն, ե՛ն, դե ծա-ղիկ, ե՛ն, ե՛ն, ե՛ն,
դե ծի-րան, ե՛ն, ե՛ն, հո՛:

ԱՌՏՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Առտնին նշանակում է տանը կատարվող:

Առտնին աշխատանքի երգերը կանայք են երգում կաթ կթելու, իլիկով ու ճախարակով թել մանելու, սանդ ծեծելու, բուրդ գգելու, խնոցիով կարագ հարելու և այլ աշխատատեսակների ընթացքում: Կանանց երգերը նույնպես կապված են տվյալ աշխատանքի հետ և ուրիշ աշխատանքի ընթացքում չեն երգվում:

Կրկին առանձնահատուկ վերաբերմունք կա աշխատանքային գործիքների նկատմամբ՝ երկանք, սանդ, սանդերք, թեշի, ճախարակ և այլն: Ճախարակը գեղջկուհին համարում է «անգին քար», սանդերքը՝ «ոսկե ատամ բարեկամ», և այլն: Այս իրերը հարազատ են գեղջկուհուն, լսում, հասկանում, տանջվում են նրա հետ միասին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Իլիկը թել մանելու
ձեռքի պարզ
գործիք է:



Երկանքը
հացահատիկներ
աղալու համար է:



Ճախարակը թել մանելու
գործիք է՝ իլիկի համեմատ
ավելի զարգացած
մեխանիզմով:



Սանդը ծավար
ծեծելու համար է:

Սանդերը բուրդ
կամ բամբակ
զգելու համար է:



Խնոցիով կարագ են
հարել, մածուն և
թթվասեր ստացել:



Մինաս Ավետիսյան
(1928–1975)
«Խնցիկ» (1964)

Այս կտավում պատկերված են խնցիկով աշխատող կանայք:

Նկարում կարող եք տեսնել աշխատանքի գործընթացը, որտեղ մերթ կանանցից մեկն է հրում խնցին, մերթ մյուսը: Երկարատև այս ընթացքում կանայք նաև երգում են:

Առտնին երգերի բնութագրական առանձնահատկությունը նրանց ռիթմն է: Ի տարբերություն տղամարդկանց աշխատանքային երգերի ազատ ոճի, ինչը պայմանավորված է աշխատանքի բնույթով, կանանց երգերին բնորոշ է հավասարաչափ պարբերական ռիթմը և շեշտվածությունը, քանի որ կանանց աշխատանքը հաճախ պայմանավորված է ձեռքերի պարբերական շարժումներով: Բանաստեղծական տեքստի ու երաժշտության ռիթմը համապատասխանում են աշխատանքի ռիթմին:

Նկարագրական տարրերը բնորոշ են նաև կանանց աշխատանքային երգերի բանաստեղծական տեքստերին: Այսպես, սանդի երգերի կրկնակներում երգում են «խի՛ժ, խի՛ժ, խան՛է, խան՛է»: **Խի՛ժ** բառը բացականչություն է, որն ասում են փայտե մուրճով հարվածելու ժամանակ, իսկ **խան՛է** նշանակում է «հանի՛ր» և արտաբերվում է մուրճը բարձրացնելիս:

Սովորե՞ք Հայրիկ Մուրադյանի միջոցով փոխանցված «Տեսն էլար» սանդի երգը՝ «խի՛ժ, խան՛է» կրկնակով: Բանաստեղծական տեքստի հիմքում Շատախի բարբառն է:

• Ուշադրություն դարձրեք «Տեն էլար» երգի ռիթմի և ասնդով աշխատելու ռիթմի համապատասխանությանը:

• Համեմատեք «Տեն էլար» և «Հոլ արա, եզր» երգերը: Արդյո՞ք երկուսն էլ ունեն կանոնավոր ռիթմ: Ինչն է նման, և ինչը՝ տարբեր:

• Այժմ, երբ արդեն սովորել եք երգերը, փորձեք ձևակերպել, թե ինչ է նշանակում ազատ ռիթմով երգ և կանոնավոր ռիթմով երգ:

ՏՆԷՆ ԷԼԱՐ

Տը - նեն է - լար տու կայ - նար տյուռ, մէշ - կըտ պա - րակ՝
 խան - ջա - ռի պյուռ, քյա - մին է - զար, ի - տու շուռ-մուռ,
 յէս քյո սի - բուն շի - վար ու ծուռ: Խի - օ, խի - օ,
 խա - նէ, խա - նէ, խի - օ, խի - օ, խա - նէ, խա - նէ:

Քյէլքյոտ մաքյու, շօրօր ծըկան,
 Կուզիմ իյնիս ձի սիրական.
 Թուխ կոնդուրետ, սիվտակ փուլակ.
 Յէս քյի տառնէ, չիթող ֆալաք:
Խիօ, խիօ, խսսնէ, խսսնէ:

Ճուրն ի փրթիր, կըկյա սարէն,
 Կըկյա թափվի մարմար քյարէն,
 Հիրուր մի՛ տու սրտիս յարէն,
 Խարաք շունի՛մ անոշ յարէն:
Խիօ, խիօ, խսսնէ, խսսնէ:

Տու կայնիր իս հախապի ական,
 Փէլքյոտ կըտա արէկյական.
 Կարմիր թըշէր արուն կաթան,
 Կըլոր հիրես, պըստիկ պերան:
Խիօ, խիօ, խսսնէ, խսսնէ:

տընեն — տանից
 էլար — դուրս ելար
 տու — դու
 տյուռ — դուռ
 պյուռ — բուռ
 էզար — զարկեց

իտու — տվեց
 քյելք — քայլվածք
 մաքյի — էգ ոչխար
 ծուկ — ձուկ
 կոնդուրա — երկարաճիտ կոշիկ
 քյի — քեզ
 տառնէ — պիտի առնեն

չիթող — չեն թողնի
 ֆալաք — բախտ, ճակատագիր
 ճուր — ջուր
 հիրուր — իրար
 հախապուր — աղբյուր
 փեյլք — փայլ

ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Վիպական երգերը հնագույն ժամանակների պատմաքաղաքական իրողությունները գեղարվեստական ընդհանրացումով ներկայացնող երգեր են: Ստեղծվում են իրական դեպքերի հիման վրա, սակայն իրական պատմական դեպքեր չեն ներկայացնում:


Վիպերգերի մասին առաջին տեղեկությունները տալիս են հինգերորդ դարի հայ պատմիչները՝ Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը: Այդ թվում են, օրինակ, Հայկ ու Բելի, Արամի, Տորք Անգեղի, Արայի ու Շամիրամի մասին առասպելները, որոնց դուք մասամբ ծանոթ եք հայ գրականությունից:



«Սասնա ծռեր» էպոսի երգվող հատվածներ

Հայոց «Սասնա ծռեր» էպոսը չորս ճյուղից բաղկացած մեծածավալ ստեղծագործություն է: Այն անվանում են նաև «Սասունցի Դավիթ»՝ ամենասիրելի հերոս Դավթի անունով: Էպոսն ընդգրկում է Սասնա տան չորս սերնդի պատմությունը և ունի չորս ճյուղ՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր»:

Էպոսում արտացոլվում է ինչպես պայքարը օտարների դեմ՝ հանուն հայրենիքի ազատության ու անկախության, այնպես էլ երկրի ներքին կյանքն ու պայքարը անարդարությունների դեմ: Էպոսը վերջնականորեն ձևավորվել է 7-10-րդ դարերում՝ արաբական տիրապետության շրջանում: Հիմքում որոշակի պատմական իրադարձություններ են, սակայն կան նաև տարբեր ժամանակների պաշտամունքների շերտեր՝ մայրիշխանության ժամանակներից, հեթանոսությունից, արևի, ցրի պաշտամունքի շրջանից մինչև քրիստոնեություն:



Երվանդ Քոչար (1899–1979)

«Սասունցի Դավիթը
Քուռկիկ Ջալալու հետ» (1939)

«Փոքր Մհերը» (1939)



«Սասնա ծռերը» պատմելու ժամանակ կրող–ասացողները ուղիղ խոսք պարունակող հատվածները երգեցողությամբ են ներկայացրել:

Ասացողը էպոսը կրող և ներկայացնող անձն է:

Չորս ճյուղերից յուրաքանչյուրից առաջ երգում են «Զօղորմի», որով դիմում են Աստծուն՝ հայցելով նրա գթասրտությունն ու ողորմածությունը էպոսի գործող անձանց համար: Օրինակ՝ առաջին ճյուղից առաջ երգում են.

*Դառնամ զօղորմին տի տամ Ծովինար Խաթունին,
Դառնամ զօղորմին տի տամ Սանասարին, Բաղդասարին:*

Այս շարքում «զօղորմի» են երգում նաև ունկնդիրների ու նրանց ծնողների համար: Ընդ որում՝ ավանդաբար թե՛ երգողը, թե՛ ունկնդրողը «զօղորմի»-ների ընթացքում պետք է ոտքի կանգներ:

Էպոսի երգերի զգալի մասը Դավթի անունից է երգվում: Օրինակ՝ Դավիթը դիմում է հորեղբորը և խնդրում, որ իր համար հայր լինի, քանի որ ինքը կորցրել է հորը: Մեկ այլ երգում Դավիթը հորեղբորը խնդրում է ցույց տալ հոր կառուցած եկեղեցու՝ Մարութավանքի տեղը, որպեսզի ինքը վերականգնի այն: Մեզ են հասել այնպիսի երգային դրվագներ, որտեղ Դավիթը հորեղբորը խնդրում է իրեն տալ նախնիների ձին՝ Քուռկիկ Ջալալին, խաչը՝ Խաչ Պատարագին, և այլ իրեր, որ իր ընտանիքին են պատկանել: Հորեղբայրը վախենում է այս բոլորը հանձնել Դավթին, բայց նաև չի կարողանում չտալ, որովհետև Դավիթը պնդում է:

Իսկ կռվի գնալուց առաջ Դավիթը, որպես ժողովրդի զավակ, երգով դիմում է տանտիկիններին ու խնդրում հաց թխելիս իր անունը ասել, ապա դիմում է սարերին ու ձորերին ու նրանցից էլ ուժ է խնդրում:

«Սասնա ծռեր» էպոսի երգերը յուրօրինակ կառուցվածք ունեն, որը այլ ժանրերի երգերում չի հանդիպում: Դրանք բոլորը սկսվում են բարձր ձայնածավալում (ռեգիստրում), որտեղ ծավալվում է երգի հիմնական մասը, ապա թռիչքով իջնում են ցած, որտեղ հնչում է երգի ավարտը:

Ռեգիստրը հնչողության դիրքն է, տարածքը, որը կարող է լինել բարձր, միջին, ցածր:

Աշխարհի շատ ժողովուրդներ ունեն էպոսներ, որոնք համաշխարհային մշակույթի գանձարանի մաս են կազմում, ինչպես, օրինակ, հին հնդկական «Ռամայանա»-ն, շումերական «Գիլգամեշ»-ը, հունական «Իլիական»-ն ու «Ոդիսական»-ը և այլն: Բայց հետաքրքիր է, որ դրանցից քչերն են պահպանվել երգվող բաղադրիչով: Երգվող էպոս հանդիպում ենք ֆիննական մշակույթում՝ «Կալևալա»-ն, նախկին Հարավարևելյան Եվրոպայի երկրներում՝ Ալբանիայում, Սերբիայում, ռուսաստանյան Սիբիրում և այլն:

Այս բոլոր երգվող էպոսների մեղեդիները ծավալվում են միայն մի քանի հնչյունի շուրջ: Սակայն հայոց էպոսը բավականին բարդ ու զարգացած մեղեդիներ ունի և դրանով շատ է տարբերվում այլ երգվող էպոսներից:



Ունկնդրում

Ունկնդրե՛ք «Սասնա ծռեր» էպոսի երգվող հատվածներ «Կայթ» նվագախմբի կատարմամբ, որտեղ ներառված են հետևյալ դրվագները.

- Զողորմի
- Դավիթը դիմում է հորեղբորը և խնդրում իրեն հայրություն անել, քանի որ ինքը հայր չունի:
- Դավիթը Մսրա Մելիքի դեմ կռվի դուրս գալու համար հորեղբորից պահանջում է իր հոր՝ Մեծ Միերի հրեղեն ձին, ձիու թամբը, սանձը, թուրը, հանդերձանքը:
- Դավիթը կռվի մեկնելուց առաջ երգում է «Այսօր կռվի դաշտ գնալու եմ ես»:



«Սասնա ծռեր»

Ունկնդրում

Հորեղբորը դիմելն է ներկայացնում Հայրիկ Մուրադյանի կատարած հետևյալ հատվածը:



«Տո խրոխայեր»

Ունկնդրում

Հետևյալ երգը հնչում է Ձենով Հովանի (այլ պատումներում՝ Օհան) անունից, որը ափսոսանք է հայտնում, որ Դավթին է հանձնելու Սասնա տան հրեղեն ձին, նրա թամբը, թուրը և այլն: Հորեղբայրը Դավթին չի վստահում, ուստի կարծում է, որ այս բոլորն այլևս չեն վերադառնալու: Կատարում է «Կարին» երգ ու պարի անսամբլը:



«Ափսոս»

- Հավաքե՛ք տեղեկություններ այլ ազգերի էպոսների մասին, քննարկե՛ք դրանց գրառման վայրը, լեզուն, ստեղծման մոտավոր ժամանակաշրջանը, առկայության դեպքում՝ հեղինակին:

- Ունկնդրե՛ք այլ ազգերի երգվող էպոսների մեղեդիներ, նկարագրե՛ք դրանք, ապա փորձե՛ք համեմատել հայոց էպոսի երգերի հետ:

- Կարդացե՛ք Հայկ ու Բելի, Արամի, Տորք Անգեղի մասին առասպելները: Կա՞ն նմանություններ «Սասնա ծռեր» էպոսին:

ՌԱԶՄԱԿԱՆ ԵՐԳԵՐ ՈՒ ՊԱՐԵՐ

Հայ մշակույթում շատ տարածված են եղել ռազմական պարերը: Համարվում է, որ մարտի մեկնելուց առաջ տղամարդիկ պարել են, դրանով ուժ հավաքել, ոգևորվել, նաև բարկությունը պարպել, որպեսզի սառը դատողությամբ կռվի գնան: Այսպես, քոչարի պարի մեջ ուս ուսի, թև թևի տված պարելը միասնություն և համախմբվածություն է խորհրդանշել:

Յարխուշտա պարի ժամանակ ձեռքերով միմյանց հարվածելու միջոցով միմյանց ուժ են փոխանցել:



Նկարում «Կարին»
անսամբլը պարում է
քոչարի

Հատված յարիսուշտա
ռազմապարից:
Նկարում «Կարին»
անսամբլն է:



Քոչարին շատ տարածված է եղել Հայոց լեռնաշխարհում:
Յուրաքանչյուր տարածաշրջան ունեցել է քոչարու իր տարբերա-
կը: Օրինակ՝ պահպանվել են Սասունի, Մուշի, Ալաշկերտի, Սղեր-
դի, Կարինի և այլ քոչարիներ:

Ունկնդրում

Սովորեք Կարևո քոչարին՝ որպես ուղեցույց ունենալով տեսանյութը:



«Կարևո քոչարի». ուս ուսի

«Ձայն մը հըն-չեց» ռազմի երգը մեզ է հասել Հայրիկ Մուրադյանի միջոցով: Այն բաղկացած է դանդաղ-իմպրովիզացիոն և արագ-քայլերգային մասերից: Հայ մշակույթին առհասարակ շատ բնորոշ է դանդաղ և արագ տարբերակների հերթագայումը: Այդպիսի իրողության հանդիպել եք գյովնդ և վերվերի պարերի հերթագայության առիթով: Նույնը տարածված է նաև հոգևոր երաժշտության մեջ, որտեղ ևս նույն երգի ծանր (այսինքն՝ դանդաղ) և գնայուն (այսինքն՝ արագ) տարբերակներ գոյություն ունեն, որոնք կարող են հերթագայել միմյանց:

ՁԱՅՆ ՄԸ ՀՆՉԵՑ

Ձայն մը հըն-չեց Էր-զը-րու-մի
հա - յոց լեռ - նե-րեն, թունդ-թունդ ե-լան հա - յի սըր-տեր
գեն - քի շա - սյու-նեն, գեն - քի շա-սյու-նեն:
Ձայն մը հըն-չեց Էր - զը-րու - մի հա - յոց լեռ - նե-րեն, հա - յոց
լեռ - նե-րեն, թունդ-թունդ ե - լան հա - յի սըր - տեր գեն - քի



Հայ գյուղացին դարուց ի վեր սուր, զենք չէր տեսած,
Դաշտը թողուց՝ սուր, հրացան բահի տեղն առավ:

Հայ ծերուկը, ցուպը ձեռքին, լայով տենչում էր.
Հայրենիքի ազատություն տեսնել ու մեռնել:

Լսեց սուլթան ու սառեցավ արյունը վատին.
Չէր երագեր հային տեսնել նա այդ վիճակին:

Յնձա, մայր իմ, ով Հայաստան, որդիքդ միացան,
Ութը տարու սուգ ու թախիծ քեզնից վերացան:



ԿՈՄԻՏԱՍ

Հայ ժողովրդական երաժշտության բնագավառում առանձնակի դեր ու նշանակություն ունի Կոմիտաս Վարդապետի (1869–1935) գործունեությունը:


19–րդ դարում, երբ հայ մշակույթում սկսեց զարգանալ պրոֆեսիոնալ երաժշտական արվեստը՝ դասական կոմպոզիտորական դպրոցը, առաջին անգամ սկսեցին ժողովրդական երաժշտությունն ընկալել որպես գեղարվեստական արժեք: Հայ կոմպոզիտորներ Քրիստափոր Կարա–Մուրզան և Մակար Եկմալյանն արդեն լրջորեն հետաքրքրվում էին ժողովրդական երաժշտությամբ: Սակայն երաժշտական ֆուկլորը, որպես բարձրագույն արժեք, առաջին անգամ կարևորել է Կոմիտասը: Մի անգամ նա ընկերոջ հետ Քանաքեռ գյուղ այցելության ժամանակ պատահականորեն լսում է ժողովրդական երգ, և այդ դիպվածը ճակատագր

րական դեր է ունենում հայ մշակույթի համար, քանի որ ֆուլկլորը դառնում է Կոմիտասի գործունեության կարևոր ուղղություններից մեկը:

Կոմիտասը տարիներ շարունակ հավաքում էր երաժշտական ֆուլկլոր՝ կորստից փրկելով բազմաթիվ նմուշներ: Սա նշանակում է, որ եթե այդ պահին երգերը չգրառվեին, դրանք, ժամանակի ընթացքում կիրառությունից դուրս գալով, կմոռացվեին, սակայն Կոմիտասի բանահավաքչության արդյունքում մեծաքանակ երգեր հասել են մեզ:



Կոմիտաս
Վարդապետ



Փանոս Թերլեմեզյան (1865–1941)
«Երաժշտագետ Կոմիտասը» (1913)

Կտավի հեղինակը Կոմիտասի
մտերիմ ընկերն էր:

Կոմիտասն այցելում էր տարբեր հայկական բնակավայրեր, տեղում լսում ու գրի էր առնում երգեր ու եղանակներ, այնուհետև ուսումնասիրում էր, դասակարգում, համեմատում: Հայկականից բացի՝ Կոմիտասը հավաքում էր նաև հարևան ազգերի երգերը, որպեսզի հասկանա յուրաքանչյուր ազգի երաժշտության առանձնահատկությունները և փոխազդեցությունները:

Կոմիտասը հայտնագործեց, որ հայ երաժշտական ֆոլկլորն ու հայ հոգևոր երաժշտությունը հարազատ են միմյանց կառուցվածքով, ուստի դրանց անվանեց «քույր ու եղբայր»:

Նա ստեղծել է ժողովրդական երգերի անզուգական մշակումներ, որոնք համաշխարհային երաժշտության մասշտաբով նմանօրինակներ չունեն: Կոմիտասը հատուկ ձևով բազմաձայնեց հայ երաժշտությունը՝ միաձայն մեղեդուն հավելելով հենց այդ մեղեդու օրինաչափություններից ծնունդ առած մեղեդային գծեր: Արդյունքում նրա ստեղծագործությունները հայ ժողովուրդն ընկալում է որպես խիստ ազգային, իսկ ոչ հայկական միջավայրում նրա երաժշտությունն աչքի է ընկնում խիստ յուրատեսակ հնչողությամբ:

Ունկնդրում

Ունկնդրե՛ք Կոմիտասի «Առավոտուն բարի լուս» հարսանեկան խմբերգը, որի մեղեդին ժողովրդական երգ է՝ կոմպոզիտորի գրառմամբ: Հետևե՛ք, թե ինչպես է Կոմիտասը կառուցել բազմաձայնությունը, նախ՝ պահված ձայներով, որոնք հայ մշակույթում հայտնի են «դամ» բնորոշումով, ապա՝ երգչախմբի բոլոր ձայներում հետաքրքիր լուծումներ տալով:



Կոմիտաս
«Առավոտուն բարի լուս»

Անունը Սողոմոն էր, ազգանունը՝ Սողոմոնյան: Ծնվել է Օսմանյան կայսրության Կուտինա (կամ Քյոթահիա) քաղաքում: Կուտինայում շատ հայեր էին ապրում, սակայն նրանք թրքախոս էին: Սողոմոնը նույնպես տանը թուրքերեն էր խոսում: Կես տարեկան էր, երբ մորը կորցրեց, ապա տասը տարին դեռ չէր լրացել, երբ կորցրեց նաև հորը: Նրա խնամքով զբաղվել է տատը՝ Մարիամը:

Կուտինայի հոգևոր առաջնորդը պետք է մեկներ էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: Նրան հանձնարարում են իր հետ մի որբ տղա տանել էջմիածին: 20 հոգու մեջ վիճակ են հանում, և բաժինը հասնում է Սողոմոնին: Երբ Սողոմոնը ներկայանում է կաթողիկոսին, հայերեն չի խոսում: Կաթողիկոսի հարցին, թե առանց հայերեն իմանալու ինչպես պիտի սովորի էջմիածնում, Սողոմոնը համարձակորեն պատասխանում է, որ հենց դրա համար էլ եկել է: Իսկ երբ կաթողիկոսը հարցնում է, թե արդյոք Սողոմոնը կարող է ինչ-որ բան երգել, վերջինս երգում է մի հոգևոր երգ: Այնքան գեղեցիկ է երգում, որ կաթողիկոսն արտասվում է: Դրանից հետո որոշվում է Սողոմոնին պահել էջմիածնում: Այդպիսով՝ Սողոմոնը սովորում է Գևորգյան ճեմարանում, որտեղ ձեռք է բերում հոգևորականի համար անհրաժեշտ գիտելիքներ: 21 տարեկանում ձեռնադրվում է ավագ սարկավագ, իսկ չորս տարի անց՝ արբեղա: Փոքր-ինչ ավելի ուշ դառնում է վարդապետ, որը եկեղեցական գիտական աստիճան է: Հոգևոր կրթությունը նրան շատ է օգնել երաժշտական գիտական գործունեության ընթացքում:


*Սարկավագը եկեղեցու կրտսեր սպասավորն է:
Քահանայությունը Հայ առաքելական եկեղեցում
երկու տեսակ է՝ ամուսնացյալ և ոչ ամուսնացյալ:
Արեղան ոչ ամուսնացյալ՝ կուսակրոն քահանան է:
Վարդապետը եկեղեցական գիտական աստիճան է:*

Արեղա կամ քահանա ձեռնադրվելիս նոր անուն են ստանում, որը տալիս է ձեռնադրող բարձրաստիճան հոգևորականը: Սողոմոնին արեղա ձեռնադրելիս կաթողիկոսը նրան տվել է Կոմիտաս անունը՝ ի պատիվ 7-րդ դարի հայոց կաթողիկոս Կոմիտաս Աղցեցու:

*Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը հայ մշակույթում
կարևոր դեր ունեցած անհատներից է: Այսպես, նա է կառուցել
էջմիածնում գտնվող Հռիփսիմեի վանքը, որը յուրահատուկ է իր
ճարտարապետական լուծումներով, գմբեթի կառուցման
սկզբունքով և այլ առանձնահատկություններով:
Կոմիտաս Աղցեցին է նաև առաջին անգամ հայ գրականության
մեջ կիրառել ծայրակապի՝ ակրոստիքոսի*

սկզբունքը: Այսպես, Կոմիտաս կաթողիկոսը հեղինակել է Հռիփսիմյանց կույսերին նվիրված շարական, որտեղ տողերի առաջին տառերը կույսերին վերաբերող որոշակի միտք են արտահայտում:

Սբ. Հռիփսիմեի վանքը Էջմիածնում է: Կառուցվել է 618 թ. Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ: Մինչև այժմ զարմանք է առաջացնում, թե ինչպես են 7-րդ դարում իրականացրել այս եկեղեցու գմբեթի ճարտարապետական սկզբունքը:



Ճեմարանն ավարտելուց հետո Կոմիտասը տեղափոխվել է Թիֆլիս՝ աշակերտելու հայ մեծանուն կոմպոզիտոր Մակար Եկմալյանին: Այնուհետև Կոմիտասն ուսումը շարունակել է Գերմանիայում: Երեք տարի (1896–1899) սովորել է Բեռլինում՝ մասնավոր կոնսերվատորիայում և հեղինակավոր Հումբոլդտի համալսարանում:

Կոմիտասն Էջմիածնում ապրել և գործունեություն է ծավալել մինչև 1910 թ., ապա տեղափոխվել է Կոստանդնուպոլիս (այժմ՝ Ստամբուլ): Այս ամբողջ ընթացքում Կոմիտասը ճանապարհորդել է տարբեր երկրներում՝ Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Իտալիա, Շվեյցարիա, Եգիպտոս և այլն, որտեղ նա դասախոսություններ է կարդացել հայ երաժշտության վերաբերյալ, համերգներ տվել, ուսուցողական ծրագրեր անցկացրել:

Կոմիտասի ստեղծագործական կյանքն ընդհատվել է 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի հետևանքով: Նրան բազմաթիվ այլ հայերի հետ աքսորել են, սակայն աքսորից մի քանի շաբաթ անց ամերիկյան դեսպանի միջնորդությամբ նրան վերադարձրել են Կոս-

տանդնուպոլիս: Այդուհանդերձ, Կոմիտասը Եղեռնի իրողությունների ականատեսը դառնալու արդյունքում աստիճանաբար դադարել է աշխատելուց: 1919 թ. Կոմիտասին տեղափոխել են Փարիզ բուժման նպատակով: Այնտեղ նա անցկացրել է իր կյանքի վերջին տասնվեց տարիները և չի ստեղծագործել:

Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞վ էր Կոմիտասը, ի՞նչ է նա արել և ինչո՞ւ է անգնահատելի նրա դերը հայ երաժշտության մեջ:
 - Ի՞նչն էր Կոմիտասն անվանում «քույր և եղբայր», ինչո՞ւ:
 - Գծե՛ք քարտեզ, որտեղ պատկերված քաղաքներն ու բնակավայրերը ցույց են տալիս, թե որտեղ է ապրել կամ այցելել Կոմիտասը:



ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ



Հայ երաժշտության ճյուղերից է գուսանա-աշուղական երաժշտությունը: Պատմականորեն և ժամանակագրական կարգով նախ գործել են գուսանները, ապա՝ տաղասացները, որոնք հայտնի են նաև տաղերգու անունով, այնուհետև՝ աշուղները: Ովքեր էին այս երաժիշտները, և ինչն էր նրանց գործունեության էությունը: Ինչ առնչություն կա գուսանների, տաղասացների և աշուղների միջև: Ինչո՞ւ են գուսանա-աշուղական արվեստը հաճախ անվանում «ժողովրդական»: Այս հարցերն են քննարկվելու դասագրքի այս բաժնում:

ԳՈՒՍԱՆ ՏԱՂԵՐԳՈՒ ԱՇՈՒՂ

Գուսանը հայ վաղ միջնադարյան երաժիշտ-երգիչ է:
Աշուղը Միջին Ասիայում և արևելյան մի շարք երկրներում գործող երաժիշտ-երգիչ է:
Տաղերգուն միջնադարյան երաժիշտ-երգիչ է:
Վարձակը հայ վաղ միջնադարյան կին երաժիշտ-երգիչ է:

Միջնադարյան Հայաստանում տարածված էր **գուսան** կոչվող ստեղծագործող-կատարողների գործունեությունը: Գուսանների արվեստում համակցվում էին բանաստեղծությունը, երաժշտությունը, գործիքային նվագը: Նրանք իրենց հորինած երգերը կատարում էին հանդիսականների համար:

Երգերի բովանդակությունը հիմնականում ուղղված էր սիրո, հասարակական հարցերի, մարդկային հարաբերությունների թեմաներին: Գուսանները երգում էին նաև պատմական զանազան դեպքերի, միջադեպերի մասին, գովերգում էին իշխաններին ու իշխանուհիներին և այլն: Ավելին՝ նախարարական նշանավոր տոհմերն ունեին իրենց տոհմային վիպասանությունները և գրույցները, հետևաբար ունեին նաև իրենց հորինող ու կատարող գուսանները:

Գոյություն են ունեցել նաև կին գուսաններ, որոնք հայտնի են **վարձակ** անունով: Գուսանների և վարձակների մասին առաջին վկայությունները պահպանվել են 5-րդ դարի պատմիչների աշխատություններում: Մասնավորապես՝ նրանց գործունեությունը նկարագրել է պատմահայր Մովսես Խորենացին: Գուսաններ են եղել Խորենացու հիշատակած Գողթան երգիչները: Կարող ենք, իհարկե, ենթադրել, որ նրանցից առաջ նույնպես այս արվեստը գոյություն է ունեցել:

Հիշեք, օրինակ, Գողթն գավառում Մովսես Խորենացու գրառած «Վահագնի ծնունդը»: Սա մի ընդարձակ ստեղծագործություն է եղել, որից պատահիկ է պահպանվել: Այն երգել են և նվագակցել փանդիռով: Ցավոք, երաժշտական բաղադրիչը մեզ չի հասել:

Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ եւ ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ուներ եւ զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ուներ.
Ապա թէ բոց ուներ մորուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

Փանդիոշ միջնադարյան Հայաստանում տարածված նվագարան էր, որի մասին շատ տեղեկություններ չունենք: Լարային կամիթավոր նվագարան էր, իսկ դա նշանակում է, որ գործիքը աղեղով չէին նվագում, այլ կամիթով, ինչին դուք քաջածանոթ եք կիթառի օրինակով: Փանդիոշի մասին տեղեկությունների ենք հանդիպում ոսկեդարյան հայոց պատմիչների աշխատություններում: Գիտենք նաև, որ Կիլիկյան Հայաստանի երաժիշտների շրջանակներում նույնպես այն տարածված էր:

Միջնադարյան Հայաստանում են գործել **տաղասաց**ները կամ **տաղերգու**ները: Նրանք պատմականորեն հաջորդել են գուսաններին և շարունակել նրանց արվեստը: Հիմնականում հոգևորականներ են եղել և կրթություն են ստացել:

Իսկ 17–18–րդ դարերից արդեն ասպարեզում են հայտնվել **աշուղ**ները, որոնց գործունեությունը հասնում է մինչև 20–րդ, անգամ՝ 21–րդ դար:

Աշուղը բանաստեղծ–երաժիշտ է, որի գործունեությունը տարածված է եղել Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների մեջ: Աշուղ բառը արաբական ծագում ունի և նշանակում է «սիրահար»: Աշուղն իր գործունեության տեսակով նման է գուսանին և տաղասացին: Մի կողմից՝ աշուղական արվեստը ձևավորվել և տարածվել է արևելքից՝ պարսկա–արաբական աշխարհից, մյուս կողմից, լինելով գուսանական արվեստի պատմական շարունակողը, հայ իրականության մեջ եղել է առանձին ճյուղ: Ան-

գամ որոշակի ընդհանրություն կա տաղասացի և աշուղի միջև: Այսպես, առաջին հայ աշուղներ համարվող Նաղաշ Հովնաթանը (1661–1722) և Բաղդասար Դպիրը (1683–1768) միևնույն ժամանակ համարվում են վերջին տաղերգուները:



Նաղաշ Հովնաթան (1661–1722)
«Տաղարան» (1765)

Նաղաշ Հովնաթանի՝ 1765 թ. գրված «Տաղարան»-ի այս էջը ներկայացնում է տաղերգուներին: Պահվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Այսպիսով՝ գուսան–տաղասաց–աշուղ շղթան շարունակաբար գոյություն է ունեցել հայ մշակույթում: Հետևապես այս արվեստը հայ երաժշտության բաղադրիչներից մեկն է:

Ժամանակի ընթացքում աշուղներին նույնպես սկսել են գուսան անվանել: Մեր ժամանակներում արդեն գուսան բառը գործածվում է երկու իմաստով՝ որպես միջնադարյան երաժիշտ և որպես աշուղ:

Աշուղներին ներկայացվում էր մի քանի հիմնական պահանջ. հյուսել ոտանավորներ որոշակի տաղաչափությամբ, մրցությունների ժամանակ հանպատրաստից հանդես գալ հանդիսատեսի առջև՝ հիմնականում քառատող հարց-պատասխանների ձևով, ելույթներ ունենալ միայնակ կամ գործիքային անսամբլի ուղեկցությամբ: Գուսաններն ու աշուղները երգում էին ոչ միայն առանձին երգ-բանաստեղծություններ, այլև ամբողջական հեքիաթներ, առասպելներ, էպիկական պատմություններ: Թե՛ գուսանները, թե՛ աշուղները կիրառում էին զանազան նվագարաններ, որոնցից էին **սազը, թառը, քյամանին, քամանչան, սանթուրը, քանոնը:**



Սազ



Թառ



Քամանչա



Քանոն



Սանթուր

Ունկնդրում

Ունկնդրեք Աշուղ Շիրինի «Այգեպան, ինչ ես անում» երգը՝ «Շողական» անսամբլի կատարմամբ: Փորձեք համեմատել այն ձեր իմացած ժողովրդական երգերի հետ: Քննարկեք երգում կիրառված նվագարանները:

Աշուղ Շիրին
«Այգեպան, ինչ ես անում»



Հարցեր և առաջադրանքներ

- Ինչ առնչություն և տարբերություն կա գուսանի, տաղերգուի և աշուղի միջև:
 - Կարո՞ղ էր հայ կինը միջնադարյան Հայաստանում երգել և նվագել: Ինչ էին անվանում նրան:
 - Քննարկեք երաժշտական գործիքները, որոնք հանդիպում են աշուղական արվեստում: Դասագրքում տեսնում եք մի քանիսի նկարները: Փորձեք գտնել և տեղեկություններ հավաքել այլ գործիքների մասին ևս:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛՛ ԱՅԼ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հաճախ գուսանա-աշուղական երաժշտությունն անվանում են ժողովրդական, մինչդեռ այն ժողովրդական երաժշտություն չէ:

• Ժողովրդական երաժշտությունը հեղինակի անուն չի պահպանում: Երգը գոյանում և բյուրեղանում է համայնքում շրջանառվելուց հետո, սերունդները հղկում են երգը, զտում և ընտրում իրենց հոգեհարազատ տարրերը, իսկ հեղինակի գործոնը չի կարևորվում: Մինչդեռ գուսաններն ու աշուղները երգերի ու դրանց բանաստեղծական տեքստերի հեղինակներն են: Ավել-

լին՝ շատ հաճախ նրանք իրենց ստեղծագործությունների վերջին տան մեջ հիշատակում են իրենց անունը:

- Ժողովրդական երաժշտության պարագայում չի կարևորվում նաև ստեղծման վայրը, մինչդեռ ճիշտ հակառակն է գուսանա-աշուղական երաժշտության պարագայում:

- Ժողովրդական երգում նվագարանի գործածություն չի ենթադրվում, թեպետ գեղջուկը կարող է ինքը տիրապետել որևէ նվագարանի, իսկ գուսանների և աշուղների արվեստում նվագարանը հիմնականում պարտադիր բաղադրիչ է:

- Ժողովրդական երգ ստեղծող գեղջուկներն անուսում են եղել և հիմնականում անգամ գրաճանաչ չեն եղել: Որևէ տեղ երգեր հորինելու արվեստ չեն սովորել, իսկ գուսաններն ու աշուղները հաճախել են վարպետների մոտ, սովորել ստեղծագործելու սկզբունքները, աշուղական տաղաչափությունը, գործիք նվագելը և այլն:

- Երգ ստեղծող գեղջուկը հորինելու ընթացքում կիրառում է ժողովրդի հիշողության մեջ կայունացած խաղիկներ (բանաստեղծական տեքստեր), մեղեդիներ և այլն, իսկ գուսաններն ու աշուղներն իրենք են ստեղծագործում՝ ըստ ընդունված օրենքների:

- Ժողովրդական երաժշտությունը կյանքին ուղեկցող իրողություն է: Օրինակ՝ աշխատանքային երգը ստեղծվում է աշխատելու ժամանակ, չկա աշխատանքային երգ առանց աշխատանքի գործընթացի, և չկա աշխատանք առանց երգի: Գուսանական և աշուղական երաժշտությունն այսպիսի գործառույթ չունի:

- Ժողովուրդը երբեք հանդիսատեսի համար չի երգում, այլ ինքն իր և իր համայնքի՝ մի դեպքում ժամանցի, մյուս դեպքում՝ գործունեության ձևը լիարժեք դարձնելու համար: Ինչպես արդեն գիտեք, հարսանեկան երգ երգում են միայն հարսանիքի ժամանակ, այլ ծիսական երգերը՝ համապատասխան ծեսի ընթացքում, հռոճվել՝ միայն հողամասում աշխատելու ժամանակ, և այլն: Իսկ գուսաններն ու աշուղները ելույթ են ունեցել հենց հանդիսատեսի համար, մի դեպքում՝ պալատական միջավայրում, մյուս դեպքում՝ քաղաքային կամ գյուղական հասարակական վայրերում:

Ինչպես տեսնում ենք, ժողովրդական երաժշտությունը և գուսանա-աշուղական երաժշտությունը տարբեր ոլորտներ են, որոնք ունեն միմյանցից տարբերվող թեմաներ, վերարտադրման կերպ, բովանդակություն, տաղաչափություն և տարբեր գործառույթ: Դա

Նշանակում է, որ պետք է դրանք միմյանցից հստակ զանազանել և հասկանալ, որ գուսանա-աշուղական արվեստը սխալմամբ է անվանվում ժողովրդական: Այդպես անվանել են պարզապես ժողովրդական լայն տարածումից ելնելով:

Ունկնդրում

Ունկնդրեք Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգը Նորայր Մնացականյանի կատարմամբ: Երգիչն ապրել է Նախորդ դարում՝ 1923-1986 թթ.:

Քննարկեք կատարման ոճը:

Նման է ժամանակակից կատարումներին:

Սայաթ-Նովա
«Քանի վուր ջան իմ»



Քննարկում

Համեմատությամբ քննարկեք ժողովրդական և գուսանա-աշուղական երաժշտության տարբերությունները:

Մեկնաբանեք ձեր տեսանկյունը, թե արդյոք կարող ենք գուսանա-աշուղական երաժշտությունն անվանել ժողովրդական:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գուսանա-աշուղական երաժշտության մեջ ամենից շատ արծարծվող թեմաներն են.

Սեր և սիրո գովք

Գրեթե բոլոր գուսաններն են անդրադարձել սիրո թեմային: Մասնավորապես՝ Սայաթ-Նովայի երգերում այն լայն տարածում ունի:

*Դուն էն հուրին իս, վուր գէմի կու զաւթէ,
Չունքի ինձ զաւթեցիր խափով, նազանի՛,
Արիվիլք, արիվնուտ, հարաւ ու հիւսիս
Չըկայ քիզի նըման չափով, նազանի՛:*

*Դարդիրըս շատացաւ՝ ասիլ իմ ուզում.
Աչքէմէս արտասունք հուսիլ իմ ուզում.*

*Համաշա, եանր, քիզիդ խօսիլ իմ ուզում,
Սիրտըս չէ կըշտանում գափով, նազանի՛:*

գէմի — նավ

չունքի — քանի որ

գափ — զվարճախոսություն

Բարոյախոսական և խրատական խաղեր

Այս խմբին է պատկանում հետևյալ քաղվածքը՝ կրկին Սա-
յաթ-Նովայի ժառանգությունից.

*Արի ինձ անգաճ կալ այ դիվանա սիրտ,
Հայա սիրէ, ադաբ սիրէ, ար սիրէ.
Աշխարհքըս քունն ըլի, ինչ պիտիս տանի,
Աստված սիրէ, հոգի սիրէ, յար սիրէ:*

դիվանա — խելացնոր

հայա — ամոթ

ադաբ — պատկառանք

ար — համեստություն, ամոթ

Նշանավոր դեպքեր

Գուսաններն ու աշուղները հաճախ իրենց բանաստեղծու-
թյուններում անդրադառնում են իրենց ժամանակ պատահած
դեպքերին, այդ թվում՝ երկրաշարժ, պատերազմ, սով և այլն:
Զանազան պատմական դեպքերի նկարագրություններ նույնպես
տեղ են գտել այս երգերում:

Սիրելի վայրեր

Զանազան քաղաքներ, սրբավայրեր, եկեղեցիներ գուսանա-
աշուղական արվեստում դարձել են գովքի առարկա: Այդ թվում
են Երևանը, Էջմիածինը, Էրզրումը, Թիֆլիսը, Մուղին, Օշակա-
նը, ս. Կարապետը և այլն:

Հասարակական-սոցիալական մոտիվներ

Չարիքի, կյանքում անհավասարության, հարուստների և
չքավորների, զրկողների և զրկվածների թեման հաճախ է շրջա-
նառվում այս արվեստում:

Հեգնանք, ծաղր, խարազանում

Գուսանների ու աշուղների սիրած թեմաներից է: Ծաղրում են կան բացահայտ կերպով, կան այլաբանորեն: Երգելով ծաղրում էին ազգային և հասարակական գործիչներին, պաշտոնյաներին:

Բնորոշ նմուշ է Զիվանու հետևյալ երգը.

*Անմիտ ճնճղուկը բազեի ճանկից
Ուզում է որս խլել, խելքի աշեցեք.
Կարծես ծանծրացել է գլխից ու գանգից,
Պատերազմ է մտել, խելքի աշեցեք:*

*Գայլը, վրան ոչխարի մորթի առած,
Գառներուն պահապան հսկող է դառած.
Աքլորը քարոզչի վերարկու հագած
Ամբիոն է ելել, խելքի աշեցեք:*

*Ուղտը՝ մետաքսագործ, եզր՝ նավավար,
Գայլը հովիվ դառած, կարածե ոչխար,
Աղվեսը հավնոցի դռանն հուշարար,
Ինչ հսկող են գտել, խելքի աշեցեք:*

Մտքեր, դատողություններ աշխարհի ու կյանքի մասին

Այս երգատեսակի խմբին է պատկանում Զիվանու «Ձախորդ օրերը»:

*Ձախորդ օրերը ծմռան նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջը կունենան, կուգան ու կերթան,
Դառնն ցավերը մարդու վրա չեն մընա երկար,
Որպես հաճախորդ շարվեշարան կուգան ու կերթան:*

Հանելուկներ

Աշուղական ստեղծագործությունների ինքնատիպ դրսևորումներից են հանելուկները: Սովորաբար աշուղը իր առաջադրած հանելուկի տեքստը փակցնում էր սրճարանի պատին, որտեղ ինքը ելույթներ էր ունենում, և յուրաքանչյուրը կարող էր փորձել գուշակել այն: Հանելուկի պատասխանը գտնելու փորձերը նույնպես ներկայացնում էին երգվող քառյակներով, որոնք հանպատ-

րաստից հորինում էին հավաքված բազմության առջև: Հայտնի հանելուկ երգողներից է եղել աշուղ Ջալալին:

Ունկնդրում

Ունկնդրեք Սայաթ-Նովայի «Դուն էն հուրին իս» երգը Սայաթ-Նովա անսամբլի, ապա՝ օպերային երգիչ Գուրգեն Բավեյանի կատարմամբ: Համեմատեք կատարումները: Քննարկեք նմանություններն ու տարբերությունները: Քննարկելիս ուշադրություն դարձրեք, որ կատարողները շատ տարբեր ուղղվածություն ունեն. «Սայաթ-Նովա» անսամբլը մասնագիտացած է աշուղական երգարվեստում, իսկ Գուրգեն Բավեյանը օպերային երգիչ է:



Սայաթ-Նովա
«Դուն էն հուրին իս»

Սայաթ-Նովա
«Դուն էն հուրին իս»



• Փորձեք երգել «Դուն էն հուրին իս» երգը:

ԴՈՒՆ ԷՆ ՀՈՒՐԻՆ ԻՍ

Հանդարտ, նազանքով Սայաթ-Նովա


Դուն էն հուրին իս, վուր գե - մի կու գավ - թե,
չուն - քի ինձ գավ - թե - ցիր խա - փով, նա - գա - նի,
ա - թի - վիք, ա - թիվ-մուտ, հա - թավ ու հյու - սիս
ջը - կա քի - զի նը - ման չա - փով նա - գա - նի:

Դարդիրս շատացավ ասիլ իմ ուզում .
Աչկեմես արտասունք հուսիլ իմ ուզում .
Համաշա, յար, քիզիդ խոսիլ իմ ուզում .
Սիրոս չէ կըշտանում գափով, նագա՛նի:

գեմի — նավ
չունքի — որովհետև
համաշա — շարունակ
գափ — զվարճախոսություն

Սայաթ-Նովեն ասաց՝ արգ անիմ Խանին .
Ղաբուլ ունիմ՝ քու խաթրու ինձ սրպանին .
Հենչանք ըլի, յար, գաս իմ գերեզմանին,
Ածիս խուղն վրես ափով, նագա՛նի:

արգ անիմ — խնդրանք ունեն
ղաբուլ ունիմ — համաձայն են
հենչանք ըլի — միայն թե
ածիս խուղն — լցնես հողը



ԱՇՈՒՂՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԸ

Աշուղները երեք կարգի են բաժանվում՝ պալատական, քաղաքային և գեղջկական:

Պալատական աշուղները սպասարկում էին արքունիքին, թագավորներին, իշխաններին և բարձր խավին: Իրենց երգերով գովում էին տերերի առաքինությունները, պալատական կանանց գեղեցկությունը, նագանքը:

Քաղաքային աշուղները գործունեություն են ծավալել մեծ ու փոքր քաղաքներում: Նրանք իրենց երգ ու նվագով հանդես են եկել սրճարաններում՝ հատուկ իրենց համար նախատեսված բարձր բեմերի վրա ծալապատիկ նստած, հոծ բազմության համար: Սրճարանի բազմաթիվ այցելուներ գալիս էին հատուկ նրանց ունկնդրելու, այդ թվում էին՝ առևտրականներ, արհեստավորներ, բանվորներ: Քաղաքային աշուղներին հաճախ ուղեկցում էին 3–4 հոգուց բաղկացած երաժշտախմբերը, որոնք բաղկացած էին լարային և հարվածային նվագարաններից (սազ, քյամանի, սանթուր, դափ և այլն): Քաղաքային աշուղները նաև հանդես էին գալիս հարսանիքներին, խրախճանքներին, խնջույքներին: Հատուկ սիրված էին նաև աշուղների միջև տեղի ունեցող մրցությունները, որոնք նույնպես կայանում էին մեծաթիվ հանդիսականների առջև:

Աշուղական արվեստ ունեցող յուրաքանչյուր քաղաք ուներ իր տեղային աշուղական արհեստակցական միությունը՝ համքարությունը, որը կարևոր դեր էր կատարում աշուղների համայնքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների կարգավորման

համար: Այսպես, եթե այլ քաղաքից որևէ աշուղ ցանկանում էր տվյալ քաղաքում ելույթ ունենալ, նա պետք է ստանար համքարության թույլտվությունը, ինչի համար հաճախ վճարում էր: Աշուղական մրցությունները նույնպես կազմակերպում էին նույն միությունները:

Կարևոր էր նաև նոր սերնդի աշուղների ձևավորման խնդիրը: Սկսնակը աշակերտում էր հայտնի աշուղին՝ վարպետին, նրանից սովորում աշուղական տաղաչափություն, ստեղծագործական հմտություններ, նվագարանի կիրառում և այլն: Իսկ վերջում աշակերտը քննություն էր տալիս ամբողջ համքարության առջև:

Քաղաքային աշուղների մի մասը թափառում էր զանազան քաղաքներում և քաղաքաբնակ վայրերում՝ երգելով և իր արվեստը ներկայացնելով: Մյուս մասն էլ նստակյաց աշուղներ էին, որոնք այլ արհեստի ներկայացուցիչներ էին՝ կոշկակար, ոսկերիչ, դերձակ, մոմագործ և այլն:

Գեղջկական աշուղները գործունեություն են ծավալել միայնակ կամ երկու հոգով՝ հիմնականում գյուղերի հրապարակներում: Ավելի ստույգ՝ ձմռանը ելույթներ էին ունենում գյուղում, իսկ տարվա մյուս եղանակներին, երբ գյուղացիները աշխատանքի փուլում էին, այս աշուղները ելույթների էին մեկնում քաղաքաբնակ վայրեր, որպեսզի հանդիսականներ ունենան:



Միջնադարյան Եվրոպայում, գլխավորապես՝ 12–14-րդ դարերում, տարածված և սիրված էր տրուբադուրների արվեստը, որը կարելի է համեմատել գուսանական արվեստի հետ: Տարբեր տարածաշրջաններում այս երաժիշտները կոչվում էին տրուբադուր (Ֆրանսիայի հարավ), տրուվեր (Ֆրանսիայի հյուսիս), մինեզենգեր (Գերմանիա), մենեստրել և այլն: Նրանք նույնպես կատարում էին իրենց հեղինակային երգերը՝ երաժշտական գործիքի ուղեկցությամբ: Հիմնական թեմատիկան սերն էր և պատերազմական սխրանքները: Այս երաժիշտները կարող էին լինել նաև բարձր խավի ներկայացուցիչներ, ասպետներ:

Ունկնդրում

Ունկնդրե՛ք Սայաթ-Նովայի «Առանց քիզ ինչ կոնիմ» երգը Ռուբեն Մաթևոսյանի կատարմամբ:

*Սայաթ-Նովա
«Առանց քիզ ինչ կոնիմ»*



Ունկնդրում

Այժմ ունկնդրե՛ք 12-րդ դարի Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտի հորինած երգը՝ տրուբադուրների արվեստից:



*Ռիչարդ Առյուծասիրտ
«Տրուբադուրների երգեր»*

Հարցեր և առաջադրանքներ

- Համեմատե՛ք և քննարկե՛ք աշուղական և տրուբադուրների արվեստները:
- Արդյո՞ք կարող ենք խոսել ընդհանրությունների մասին:
- Ի՞նչն է նման, և ի՞նչն է տարբեր այս արվեստներում:

ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ

Աշուղները երգել են ըստ բանաստեղծական որոշակի տաղաչափության: Տաղաչափական որոշ ձևեր համընդհանուր են առհասարակ աշուղական արվեստի համար՝ միջազգային ընդգրկումով, որոշ ձևեր էլ բնորոշ են հայկական աշուղական դպրոցին:

Այսպես, աշուղական ամենից տարածված տաղաչափական ձևերից է 4+3 կամ 3+4 վանկերի համակցությունը, որը հայտնի է բայաթի անվանումով: Այդպիսին է հետևյալ քառյակը, որի հեղինակը Գյուրջի-Նավեն է.

*Իմ սիրտը աղ ես արել,
Ջիգարըս դաղ ես արել,
Ինձանից հեռացել ես,
Ինձ բեղամաղ ես արել:*

Ինչպես տեսնում ենք, տաղաչափական այս ձևում առաջին, երկրորդ և չորրորդ տողերը ենթարկվում են ընդհանուր հանգավորման, ընդ որում՝ մի քանի վանկի ընդգրկումով («աղ ես արել», «դաղ ես արել», «բեղամաղ ես արել»), իսկ երրորդ տողը հանգավորումից ազատ է մնում:

Տարածված է 4+4 վանկաքանակով դուբեյթ անվանմամբ ձևը, 15 վանկաքանակով ղազել ձևը և այլն:

Բնորոշ հայկական է **հայրեն** կոչվող տաղաչափական ձևը, որը աշուղական արվեստը ժառանգել է միջնադարյան հայկական մշակույթից: «Հայրեն» նշանակում է հայերեն: Տաղաչափական այս ձևում յուրաքանչյուր տող բաղկացած է 15 վանկից՝ 7+8 վանկային բաժանումով: Հայրենի ձևը կոչվել է նաև անտունի: Հիշե՛ք, օրինակ, Նահապետ Քուչակի հայրենները, որոնք բոլորը ենթարկվում են այս տաղաչափական ձևին:

Թեև աշուղները հիմնականում կիրառել են արդեն կայունացած ձևերը, սակայն նրանցից ոմանք հորինել են նոր ձևեր և ստեղծագործել դրանցով: Ստորև բերվում է Սայաթ-Նովայի մի տաղից քաղվածք, որտեղ առաջին տողերի վանկերի քանակը 3+3+3+2 է, իսկ երկրորդ տողերինը՝ 4+4+3: Սայաթ-Նովայի հորինած ձևերից է:

*Ինչ կոնիմ հեքիմըն, ինչ կոնիմ ջարեն,
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ,
Էրվում է մըհլամըն, չի լավնում յարեն,
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:*

հեքիմ — բժիշկ
ջառ — վիրաբույժ
դիղ — դեղ
մըհլամ — սպեղանի
յարա — վերք

Վերջապես, աշուղների սիրելի ստեղծագործական մեթոդներից են բանաստեղծական զանազան ձևերը: Օրինակ՝

- ոտանավորի տողերի սկզբնատողերը ներկայացնում են այբուբենի հաջորդական տառերը,
- տողերի սկզբնատառերը և վերջնատառերը նույնն են,
- ոտանավորի յուրաքանչյուր տան վերջին բառերով ս վում է հաջորդ տան առաջին տողը:

Գոյություն ունի աշուղական բանաստեղծական այնպիսի ձև, որի դեպքում ոտանավորն արտասանելիս լեզուն չի շարժվում:

*Քի իմ կամում, եկ քու կամով ով աղա,
 կամում իմ քու բուգով բուխախով խաղա,
 Քի իմ կամում, եկ հիմա յա, կամ վաղ ա,
 Կակուղ խումով պահե քիմով ու համով...*

կամել — կամենալ
 բուգ բուխախ — վզի մասը, կզակի տակը
 կակուղ — փափուկ
 խում — խմելը

Մեկ այլ դեպքում էլ ոտանավորն արտասանելիս շրթունքները չեն դիպչում միմյանց: Այդպիսի օրինակ է Շոիրայու հետևյալ քառյակը.

*Սիրելի, կըշտիցս եկար անցկացար,
 Խեթ-խեթ աչք ածեցիր, խիալըդ ինչ ա,
 Էլած խեթքըս գըլխեսս առեցիր, գընաց,
 Էլի կըրկին գալըդ, գընալըդ ինչ ա:*

կըշտիցս — մոտիցս, կողքիցս
 խիալ — միտք, մտածմունք

Եվս մեկ հետաքրքիր իրողություն է աշուղների՝ միմյանց հետ, այսպես կոչված, թարս լեզվով հաղորդակցվելը: Այսպես, բառերի վանկերը միմյանց հետ փոխելով կամ տառերի հերթականությունը որոշակի տրամաբանությամբ փոփոխելով՝ ստանում էին նոր «լեզու», որը հասկանալի չէր բոլորին և ծածուկ հաղորդակցվելու հնարավորություն էր տալիս:

- Փորձեք հորինել աշուղական որևէ տաղաչափությամբ կամ տեխնիկայով բանաստեղծություն:



ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ (1712–1795)

Հայ աշուղական երաժշտության ամենանշանավոր ներկայացուցիչը Սայաթ-Նովան է, որի երաժշտա-բանաստեղծական արվեստը նորարարություն էր ոլորտում:

Անունը Հարություն (Արուֆին) Սայադյան է, իսկ Սայաթ-Նովա նրան ավելի ուշ են անվանել: Ուսումնասիրողների համար Սայաթ-Նովայի կենսագրությունը բանավեճերի առարկա է, որովհետև հիմնական փաստերը քաղվում են նրա բանաստեղծական տեքստերից, որոնք իրարամերժ տեղեկություններ են տալիս: Գիտենք, որ նա ջուլիակ էր և այդ ոլորտում հմուտ արհեստագործ էր: Նա այնքան վարպետորեն է տիրապետել աշուղական տաղաչափությանն ու երաժշտական սկզբունքներին, որ



Հրայր Ռուսկյան (1916–1992)
«Սայաթ-Նովայի դիմանկարը»
(1945)

վրաց էրակլե արքայազնը, որը հետագայում դարձավ վրաց թագավոր, նրան հրավիրել է դառնալու արքունական երգիչ-երածիշտ: Գիտենք նաև, որ 1759 թ. ձեռնադրվել է քահանա և ստացել Տեր Ստեփանոս անունը:

Ծնվել է Թիֆլիսում, իսկ գործունեության հիմնական մասը կապված է Թիֆլիսի, ապա՝ Հաղպատի վանական համալիրի հետ: Ստեղծագործել է նախ թուրքերեն, ինչը բնորոշ երևույթ էր իր ժամանակվա համար, ապա՝ հայերեն ու վրացերեն: Սայաթ-Նովայի տաղերը մեզ են հասել իր ձեռքով գրված, նաև իր որդու կազմած և վրաց թագավորի վավերացրած դավթարներում:

*Դավթար նշանակում է գիրք կամ մատյան:
Այսպես են կոչվել Սայաթ-Նովայի ստեղծագործությունների ժողովածուները:*

Սայաթ-Նովան կիրառել է աշուղական արվեստում հաստատված զանազան ձևեր, տաղաչափական սկզբունքներ, ապա հորինել նորերը: Հայ աշուղական արվեստում նրա կատարած հեղաշրջման էությունն այն էր, որ նա հակադրվեց թուրքերեն ստեղծագործելու ընդունված կարգին և ստեղծագործեց հայերեն՝ կամրջելով աշուղական և միջնադարյան գուսանական արվեստները: Իրողությունն ավելի հստակ պատկերացնելու համար հիշենք, որ գուսանները, ապա նաև տաղասացները ներկայացնում էին բնորոշ հայկական արվեստ, որը հայերեն էր, մինչդեռ աշուղական արվեստի զարգացման սկզբնական փուլում ընդունված էր ստեղծագործել թուրքերեն:

Սայաթ-Նովայի երգերը մշտապես գրավել են նաև հայ կոմպոզիտորների ուշադրությունը: Այսպես, հայ մեծանուն կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանն իր «Երևանյան էտյուդներ»-ի առաջին մասում, որը վերնագրված է «Էնգելի», կիրառել է Սայաթ-Նովայի «Դուն էն գլխեն իմաստուն իս» երգի մեղեդին: Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգն է ընկած Առնո Բաբաջանյանի սիրված գործերից մեկի՝ դաշնամուրային «Էլեգիա»-ի հիմքում:

Ունկնդրում

Ունկնդրե՛ք «Դուն էն գլխեն իմաստուն իս» երգը հեղինակի՝ Սայաթ-Նովայի տարբերակով, ապա լսե՛ք Ալեքսանդր Սպենդիարյանի «Երևանյան էտյուդներ»-ում դրա կիրառությունը: Համեմատե՛ք ստեղծագործությունները:



Սայաթ-Նովա
«Դուն էն գլխեն իմաստուն իս»



Ալեքսանդր Սպենդիարյան
«Երևանյան էտյուդներ»

Ունկնդրում

Ունկնդրե՛ք «Քանի վուր ջան իմ» երգը Սայաթ-Նովայի տարբերակով, ապա լսե՛ք Առնո Բաբաջանյանի «Էլեգիա»-ն, որը հիմնվում է նույն երգի վրա: Համեմատե՛ք ստեղծագործությունները:



Սայաթ-Նովա
«Քանի վուր ջան իմ»



Առնո Բաբաջանյան
«Էլեգիա»

ԶԻՎԱՆԻ (1846–1909)

Հայ աշուղական երգարվեստի ներկայացուցիչներից է Զիվանին:

Ծննդյան անունը Սերոբ Լևոնյան է: Ծնվել է Ախալքալաքում, իսկ գործունեությունը կապված է Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) և Թիֆլիսի հետ:

Հորեղբոր ուղղորդմամբ հորթարած է դարձել: Համազյուղացի աշուղ Սիային է նկատել Սերոբի երաժշտական ունակությունները և աշակերտության վերցրել նրան: Պատանին Սիայու մոտ

սովորել է աշուղական տաղաչափության օրենքները, ինչպես նաև քյամանի և ջութակ նվագել: Հինգ տարի անց, ընդունված կարգի համաձայն, Սիային նրան շնորհել է աշուղի կոչում և տվել Ջիվանի անունը:

Ջիվանին ելույթներ էր ունենում երաժշտախմբի հետ զանազան նվագարաններով: Ալեքսանդրապոլում աշուղների համաքա-



Աշուղ Ջիվանի (1897)

րության առաջնորդ՝ վարպետաց վարպետ (ուստաբաշի) է ընտրվել:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարին մասնակցելու համար էլ ենթարկվել է հետապնդումների, արգելվում էին նրա ելույթները, անգամ ազգրավել են նվագարանը:

Իր երաժշտական ոճով Ջիվանին տարբերվող է, որովհետև նրա գլխավոր սկզբունքը աշուղական երգը օտար բառերից ազատելն էր և պարզ լեզու ստեղծելը: Նա հենվում էր նաև գեղջկական երաժշտության վրա, որը, ինչպես գիտեք, բուն ժողովրդականն է:

Ունկնդրում

Ունկնդրե՛ք Ջիվանու «Խելքի աշեցեք» երգը Սայաթ-Նովա անսամբլի կատարմամբ:



Ջիվանի
«Խելքի աշեցեք»

ՇԵՐԱՄ (1857–1938)

Շերամի անունն է Գրիգոր Տալյան: Շերամ նրան անվանել է բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը՝ որպես «մետաքսի նման» երգեր հորինողի: Ժողովուրդն էլ նրան անվանել է «ուստա Գոքոր»:

Շերամը արմատներով կարսեցի էր: Գործունեությունը կապված է Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) հետ:

Շերամը եղել է ատաղձագործի, ապա՝ հյուսնի աշակերտ: Իր առաջին սազը և թառը ինքն է պատրաստել: Նվագել սովորել է ինքնուրույն:

Ունկնդրում

Ունկնդրե՛ք Շերամի «Փնջիկ-մնջիկ» երգը Ռուբեն Մաթևոսյանի կատարմամբ, ապա փորձե՛ք երգել այն:

Շերամ
«Փնջիկ-մնջիկ»



ՓՆՋԻԿ-ՄՆՋԻԿ

Շերամ

Յա-րըս կեր-թա սի - պե - ղի, բըլ - բու - լի հեա՛ գեղ - գե - ղի,
ու՛մ որ վա - ռե մեկ ան - գամ, ինձ կայ - րե ա - մեն հե - ղի:
Գը-նում եմ ու գա-լիս ա - թո - տով, մը-նա-ցի, ա՛խ, յա-րիս կա - թո - տով,
փըն-ջը-լիկ-մըն-ջը-լիկ մա - գե - բուն մեռ-նե-ի սըր-տա-տար նա - գե - բուն:

Վարդի ծառը փուշ-փուշ է,
Յարով քնելն անուշ է,
Ծեկլիկ ու շղվա յարս
Ճտվտիկ սիրուն դուշ է:

*Գնում եմ ու գալիս արոտով,
Մնացի, ա՛խ, յարիս կարոտով,
Փնջիկ-մնջիկ մազերուն
Մեռնի սրտատար նազերուն:*

Դարի դռշին արտեր կան,
Սարի փեշին վարդեր կան,
Յարս փնջեր է կապել,
Հեռը սիրո դարդեր կան:

Լսոր տասըն է լուսնի,
Ծուսպ կերթա՛ չես հասնի,
Ով հրեշտակ չէ տեսել,
Թող գա իմ յարիս տեսնի:

Մեղրամոմ է մատները,
Ճերմակ, փափլիկ ոտները,
Սրտեր քաշե կտանի
Աչքեր, ունքեր, այտերը:

Տանս կռնակը սար է,
Երկինքն ամպ է, խավար է,
Ուժովն անուժին կերավ,
Էս ինչ անօրեն դար է:

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԵՐԳԱՐՎԵՍԱԸ



Վոկալ նշանակում է ծայնով վերարտադրվող:

Կոմպոզիտորական երաժշտության տարածված ժանրերից է երգը, որը վերարտադրվում է ծայնով և կոչվում է նաև վոկալ ստեղծագործություն: Այն համակցում է պոեզիան՝ բանաստեղծական արվեստը, և երաժշտությունը: Կոմպոզիտորի հմտությունն է տվյալ բանաստեղծական տեքստի համար ստեղծել այնպիսի մեղեդի, որը և՛ համահունչ կլինի տեքստին, և՛ կպատկերավորի այն երաժշտության միջոցներով:

Սովորաբար կոմպոզիտորն իր երգի համար ընտրում է բանաստեղծական արվեստի նմուշ, սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ կոմպոզիտորն ինքն իր երգի խոսքերի հեղինակն է:

Երգը մեծ մասամբ ունենում է նվագակցություն, որը կարող է լինել դաշնամուրով, այլ գործիքով կամ գործիքախմբով և նվագախմբով:



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎՈՂ ԵՐԳԵՐ

Կոմպոզիտորի ստեղծած երգի հիմքում կարող է լինել ժողովրդական նմուշ և կարող է լինել ինքնուրույն, այսինքն՝ կոմպոզիտորի ստեղծած մեղեդի: Այլ կերպ ասած՝ կոմպոզիտորը կարող է ժողովրդական երգը մշակել և ստանալ նոր ստեղծագործություն: Այս դեպքում ժողովրդական երգը կարող է կիրառվել մի քանի հնարավոր եղանակով:

- Ժողովրդական երգը կիրառվում է առանց փոփոխության, ավելանում է գործիքային նվագակցությունը:

- Կոմպոզիտորը ժողովրդական երգը քիչ փոփոխությունների է ենթարկում՝ կրկին ավելացնելով գործիքային նվագակցություն:

- Կոմպոզիտորը բուն ժողովրդական երգ չի կիրառում, այլ հորինում է նոր երգ՝ ժողովրդական երգի նմանողությամբ: Այդպիսին է Կոմիտասի հանրահայտ «Կաքավիկ» երգը:

Ժողովրդական երգի հիման վրա ինքնատիպ երկեր ստեղծող հանճարեղ կոմպոզիտոր է Կոմիտասը: Նա իր երաժշտագիտական հետազոտությունների ընթացքում հայտնաբերեց հայ երաժշտության ներքին կառուցվածքը, մաթեմատիկական ճշգրտությամբ պարզաբանեց դրա էությունը և ապացուցեց, որ հայ երաժշտությունը խիստ ինքնատիպ է: Ժողովրդական երգեր մշակելիս նա հիմնվում էր իր տեսական գյուտերի վրա:

Ունկնդրում

Ունկնդրեք Կոմիտասի «Քելեր, ցուեր» երգը Հասմիկ Պապյանի կատարմամբ, այնուհետև սովորեք երգել այն: Երգի հիմքում ընկած է ժողովրդական երգ, որը Կոմիտասը մշակել է դաշնամուրային նվագակցությամբ:



Կոմիտաս
«Քելեր, ցուեր»

ՔԵԼԵՐ, ՑՈՒԵՐ

Կոմիտաս

Քե - լեր, ցո - լեր՝ իմ յա - րը, ա - րե - վի տա - կին
 քե - լեր, ցո - լեր՝ իմ յա - րը:
 Սա - րի սո - վոր, մեն մե - նա - վոր, շեկ տը - դա,
 շո՛ղ ա - րե - գակ, թո՛ղ ա - րե - գակ, ե՛կ, տը - դա:
 Սա - րի սո - վոր, մեն մե - նա - վոր, շեկ տը - դա,
 շո՛ղ ա - րե - գակ, թո՛ղ ա - րե - գակ, ե՛կ, տը - դա:

Քելեր, ցուեր՝ իմ յարը,
 Աղբյուրի ակին
 Քելեր, ցուեր՝ իմ յարը:
 Կանաչ առվով,
 Ճանաչ առվով
 Ե՛կ, տղա,
 Բաղովն արի,
 Շաղովն արի,
 Շե՛կ տղա:

Քելեր, ցուեր՝ իմ յարը,
 Գերանդին ուսին
 Քելեր, ցուեր՝ իմ յարը:
 Հով ծառի տակ,
 Չով ծառի տակ
 Ե՛կ, տղա,
 Հունձ ես արել,
 Քրտինք դառել,
 Շե՛կ տղա:


Քելեր, ցուեր՝ իմ յարը,
 Չա՛ն աչքի լուսին,
 Քելեր, ցուեր՝ իմ յարը:
 Հով է, քը՛նիր,
 Չով է, քը՛նիր, -
 Ե՛կ, տղա,
 Հունձ ես արել
 Շատ բեգարել,
 Շե՛կ տղա:

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ (1883–1935)

Ավելի հաճախ կոմպոզիտորը երգը ստեղծում է իր մեղեդիով: Հայ երաժշտության մեջ այս ոլորտում մեծ է Ռոմանոս Մելիքյանի ներդրումը:

Ռոմանոս Մելիքյանը հայ կոմպոզիտոր է և երաժշտական-հասարակական գործիչ: Նա ապրել է այն ժամանակաշրջանում, երբ ձևավորվում էր հայ պրոֆեսիոնալ երգի ժանրը: Հայ երաժշտության մեջ առաջինն է ստեղծել երգեր հայ ժամանակակից պոեզիայի հիման վրա: Նրա վոկալ ստեղծագործություններն աչքի են ընկնում առանձնահատուկ ոճով:

Ռոմանոս Մելիքյանն է հիմնադրել Երևանի կոնսերվատորիան, ինչպես նաև Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանը:



Ռոմանոս Մելիքյան

Ունկնդրում

«Մանուկն ու ջուրը» երգի հիմքում Հովհաննես Թումանյանի բանաստեղծական տեքստն է: Ունկնդրե՛ք երգը Մարիամ Սարգսյանի կատարմամբ՝ Արթուր Ավանեսովի նվագակցությամբ, ապա սովորե՛ք երգել այն:

Ռոմանոս Մելիքյան
«Մանուկն ու ջուրը»



ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Խոսք՝ Հովհաննես Թումանյանի

Ռոմանոս Մելիքյան

- Դու ո՞ր սա - րեն կու - գաս, ջը - թի՛կ,
 իմ պաղ ջը - թիկ, իմ ա - նու - շի՛կ... rit.
 - Ես էն սա - րեն կու - գամ մը - թին, որ հին ու նոր ձյունն է գըլ - խին...
 Ես էն սա - րեն կու - գամ մը - թին, որ հին ու նոր ձյունն է գըլ - խին...

- Դու ո՞ր առուն կերթաս, ջրի՛կ,
 Իմ պաղ ջրիկ, իմ անուշի՛կ...
 - Ես էն առուն կերթամ զվարթ,
 Ուր ափերն են շուշան ու վարդ... .



ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ (1921–1983)

Առնո Բաբաջանյանը մեծ հեղինակություն վայելող երաժիշտ է՝ դաշնակահար և կոմպոզիտոր: Երաժշտության ասպարեզ է մուտք գործել Արամ Խաչատրյանի հորդորով: Դեռ մանկապարտեզ էր գնում Բաբաջանյանը, երբ Արամ Խաչատրյանը նրան լսել է երգելիս և ասել, որ անպայման պետք է երաժշտությամբ զբաղվի: Տղան հետևել է Խաչատրյանի խորհրդին և դարձել կոմպոզիտոր:

Յուրահատուկ վառ անհատականություն է եղել Բաբաջանյանը: Նրան գիտեին ու սիրում էին բոլորը, իսկ նրա յուրաքանչյուր նոր ստեղծագործություն շատ արագ դառնում էր հանրաճանաչ:

Բաբաջանյանը հայտնի է որպես տարբեր ժանրերի երկերի կոմպոզիտոր՝ դասականից մինչև զանգվածային: Միջազգային ճանաչում ունեն նրա «Հերոսական բալլադը» դաշնամուրի և նվագախմբի համար, **Դաշնամուրային տրիոն, Ջութակի և դաշ-**

Նամուրի սոնատը, Վեց պատկերը դաշնամուրի համար, Պոեմը դաշնամուրի համար և այլն: Իր ստեղծագործություններում նա կիրառում էր նաև նորարարական համարձակ կոմպոզիտորական հնարներ:

Բարաջանյանը հաճախ է անդրադարձել երգի ժանրին: Գրել է թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն երգեր՝ կիրառելով ժամանակակից բանաստեղծների գործեր:



Առնո Բարաջանյան

Ունկնդրում

Ունկնդրեք «Սիրո երգ»-ը «Առաջին սիրո երգը» ֆիլմից, որի համար և գրվել է այն, ապա փորձեք երգել:

Առնո Բարաջանյան
«Սիրո երգ»



ՍԻՐՈ ԵՐԳ

Առնո Բարաջանյան

Փըռ-վել էր շուր-ջը գա-րուն, և նա-գում էր կե- չին, գար-նան ա -
 րև էր բու-րում մեր համ-բույրն ա-ռա - ջին. զե-վյուռն էր խա-ղում թը-փե-րում,
 վար-սե-րըդ մեղ - միկ գուր-գու-րում, կըրկ-նում էր եր-գիս հետ շա-րու-նակ'

Իմ ա-նուշ, իմ մի-ակ: Քեզ-նով եմ ես մի-այն ապ-րում ու շըն-չում,
 իմ շուր-թե-րից ա-նունն է քո միշտ հըն-չում, դու իմ սի-րո ա - ռև, իմ բեր-կրանք,
 իմ ա-նուշ, իմ մի-ակ: Ար-դեն օ - դու իմ ա-նուշ, իմ մի - ակ:

Արդեն օրեր են անցել,
 Միշտ ինձ հետ ես, անգին,
 Սակայն ես չեմ մոռացել
 Այն զարունն ու այգին:

• Բարաջանյանի ռուսալեզու երգերից սովորեք «Верни мне музыку» երգը, որի հիմքում Ա. Վոզնեսենսկու բանաստեղծական տեքստն է:

ВЕРНИ МНЕ МУЗЫКУ

Слова Андрея Вознесенского

Арно Бабаджанян

Вслед за мной на водных лыжах ты летишь, за спиной расту-ял
 след от водных лыж ты у-слышь их му-зы-ку у-слышь... Как от вол-
 щев-но-го смыч-ка та-ка-я му-зы-ка! У-ве-ду, те-бя от
 до-ма у-ве-ду, на ви-ду у всех зна-ко-мых у-ве-ду,
 у-ве-ду, быть может на бе-ду... Одной на-тя-нутой струной свя-за-ны
 мы сло-бой! Ты сквозь го-да, ты сквозь го-да ле-тишь за мной,

как буд-то ан-гел за-то-ре-мый за спи-ной! Вер-ни мне му-зы-ку... Без
му-зы-ки тос-ка, мы рас-ста-лись но о-ста-лась на-ша му-зы-ка.
Ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля, ля
ля, ля, ля, ля, ля. Вер-ни мне му-зы-ку... Без
му-зы-ки тос-ка, мы рас-ста-лись но о-ста-лась на-ша му-зы-ка.




ԷՂԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1930–1998)

Հայ կոմպոզիտորական դպրոցի ինքնատիպ ներկայացուցիչներից է Էղգար Հովհաննիսյանը, որը հեղինակ է բալետների՝ «Մարմար», «Երկնագույն նոկտյուրն», «Հավերժական կուռք», «Անտունի», օպերա-բալետի՝ «Սասունցի Դավիթ», կամերային և սիմֆոնիկ ստեղծագործությունների, խմբերգերի և երգերի: Գրել է ինչպես ժողովրդական երգերի, այնպես էլ իր իսկ մեղեդիների վրա հիմնվող երգեր ու խմբերգեր:

Բացի կոմպոզիտորական գործունեությունից՝ ակտիվ հասարակական գործիչ է եղել: Ղեկավարել է Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան և այլն:

Բանաստեղծ Վահան Տերյանը Էղգար Հովհաննիսյանի տատիկի եղբայրն էր, որին, սակայն, կոմպոզիտորը չի տեսել: Բայց նա հեղինակել է բազմաթիվ գործեր՝ Տերյանի բանաստեղծությունների հիման վրա: Այդպիսին է «Անուշ անուրջով» խմբերգը:



Էդգար Հովհաննիսյան

Ունկնդրում

Ունկնդրեք «Անուշ անուրջով» խմբերգը «Խազեր» երգ-
չախմբի կատարմամբ և փորձեք երգել մեղեդին:



Էդգար Հովհաննիսյան
«Անուշ անուրջով»

ԱՆՈՒՇ ԱՆՈՒՐՋՈՎ ՊԱՃՈՒՃԻՐ ՀՈԳԻՍ

Խոսք՝ Վահան Տեղյանի

Էդգար Հովհաննիսյան

Ա - նուշ ա - նուր - ջով պա - ճու - ճիր հո - զիս,
 նըս - տիր մահ - ճիս մոտ ու տը - խուր եր - զիր,
 մոր պես քընք - շա - բար մո - տե - ցիր դեմ - քիս,

Խա - դաղ փայ-փա - յիր սիր-տըս տա - ռա - գիր:

Խա - դաղ փայ-փա - յիր սիր-տըս տա - ռա - գիր:

Լայն դաշտերի մեջ դանդաղ մշուշում,
 Լքված լռության ծածկոցն է իջել,
 Իմ սիրտը հավետ կարոտն է մաղում,
 Տխուր իմ հոգում երգերն են ննջել:

Երգի՛ր ինձ համար, երգի՛ր ինձ համար,
 Ինձ հեքիաթ ասա, անբջանք բեր ինձ,
 Յրի՛ր քո երգով մնայ ու համատ,
 Աշնան գիշերը իմ լքված սրտից:

Բոլորովին այլ բնույթ ունի Պարույր Սևակի բանաստեղծական տեքստի վրա հիմնվող «Սարդարապատ» երգը՝ նվիրված 1918 թ. Սարդարապատի հաղթանակին:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Խոսք՝ Պարույր Սևակի

Էդգար Հովհաննիսյան

Երբ չի մը - նում եք ու ճար, խեն - թերն են զըտ - նում հը - նար:

Այս - պես ծա - գեց, ա - ռե - զա - կեց, Սար-դա-րա-պա - տի մար - տը մեծ:

Այս - պես ծա - գեց, ա - ռե - զա - կեց Սար-դա - ռա-պա - տի մար - տը մեծ: Չան-

գեր դո - դան - ջեք, սըր - բա - զան քա - ջե - ռին կան-ջեք այս ար-դար պա -

տից: Մե - րունդ-ներ, դուք ձեզ ճա - նա - չեք Սար - դա-րա - պա - տից:

Ավարայրից ջանք առանք,
 Այստեղ մի պահ կանգ առանք,
 Որ շունչ առած՝ շունչներս տանք
 Սարդարապատի պատի տակ:

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,
 Մենք չհանգանք, դեռ կգանք՝
 Երբ տան զանգը, ահազանգը՝
 Որ մեր հոգու պարտքը տանք:

Կրկնեղ.

Չանգե՛ր, դողանջեք,
 Սրբազան քաջերին կանչեք այս արդար պատից:
 Սարունդներ, դուք ձեզ ճանաչեք Սարդարապատից:

ՍՏԵՓԱՆ ԼՈՒՍԻԿՅԱՆ (1956–2001)

Դաշնակահար և կոմպոզիտոր Ստեփան Լուսիկյանը սովորել է Երևանի կոնսերվատորիայում: Հեղինակ է գործիքային զանազան ստեղծագործությունների, մանկական գործերի, այդ թվում են «Ճպուռն ու մրջյունը» (ըստ Եզոպոսի առակի) բալետը, «Մեծապատիվ մուրացկաններ» մյուզիքլը և այլն: Հեղինակել է Երևանի և Գյումրիի թատրոնների 30 ներկայացումների երաժշտությունը:

Լուսիկյանը վոկալ շարեր է գրել Վահան Տերյանի, Վահան Թեքեյանի, Ռազմիկ Դավոյանի բանաստեղծությունների հիման վրա:

- Սովորե՞ք Լուսիկյանի «Նոր Հայաստան» երգը:

ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Ստեփան Լուսիկյան

Դու Արարատ կանչող երկիր՝ մեր հույսերով օժված, մեր
 հին Կիլիկիա, մեր նոր Արմենիա, լույս է իջել հողիդ: Անուկներդ
 թող օրհնյալ լինեն, հուշերդ թող անցյալ լինեն, և թող որ
 միշտ Աստված պահի երկիրը մեր: Անուկներդ մեր Ա -
 մեն: Դու Վարդապետ երկիր մեր Սուրբ հուր ու սրբով անցար, մեր

հին Կի-լի - կիա, մեր նոր Ար - մե-նիա լույս է ի-ջել հո - դիդ: Ա-նու-նըդ

թող օրի-նյալ լի - նի, հու - շե - րըդ թող ան - ցյալ լի - նեն, և թող որ

միշտ Աստ-ված պա-հի եր - կի - րը մեր: Ա - նու-նըդ մեր

Ա - րե-վից շիկ-նած եր - կիր, Մա-սի-սից գեր-ված եր -

կիր, դա-րե-րով ան-ցար, կան - գուն կե-ցար, քաղ-ցրիկ հայ - րե - նիք:

Ա-նու-նըդ թող օրի-նյալ լի-նի, հու-շե-րըդ թող ան - ցյալ լի-նեն, և թող որ

միշտ Աստ-ված պա - հի եր - կի - րը մեր: Ա - նու - նըդ

մեր: Ա - մեն, ա - մեն:



ԱՐՄԵՆ ՍՄԲԱՏՅԱՆ (ծնվ. 1954)

Հայաստանին է նվիրված կոմպոզիտոր և դիվանագետ Արմեն Սմբատյանի նույնանուն երգը, որի խոսքերի հեղինակը Վահան Անդրեասյանն է:

ՀԱՅԱՍՏԱՆ

Խոսք՝ Վահան Անդրեասյանի

Արմեն Սմբատյան

Այս գա-րու-նը քեզ հա - մար թող լի - նի ան - դորը, այս գա-րու-նը քո ման-
կանց թող բե - ռի օ - լորը, տա-ռա - պած իմ հայ-րե-նիք, այդ - պես մո-լոր հե -
րիք քայ - լես, բավ է լուռ ու զըլ-խի-կոր քայ - լես, կանգ-նիր նո - րից ու նա -
յիր ա-ռաջ: Հա - յաս - տան, մո-ռա-ցիր այն ցա - վը որ գը-նաց, հա-վա
տա, լոկ սե - ռը քեզ մը-նաց, թող Աստ-ված օրի-նի որ - դոց հա-յոց,
Հա - յաս - տան, մո-ռա - ցիր այն ցա - վը, որ գը-նաց, հա-վա -
տա, լոկ սե - ռը քեզ մը-նաց, թող Աստ - ված օրի-նի որ - դոց հա-յոց:

Թող կռունկը քո արտում բույնը իր հյուսի,
Թող սոխակը իր երգով քո հոգում խոսի,
Եվ թող նոր այս ծաղիկները քո վերքերը տաք փակեն,
Եվ թող արևի շողերը քեզ նորից լցնեն, ողողեն սիրով:

Կրկնորդ.

Հայաստան, մոռացիր այն ցավը, որ գնաց,
Հավատա, լոկ սերը քեզ մնաց,
Թող Աստված օրհնի որդոց հայոց:



ՌՈՔԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ (ծնվ. 1939)

Հայ կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը ճանաչված և սիրված է հատկապես իր երգերի համար: Նա երաժշտություն է գրել բամաթիվ խաղարկային ֆիլմերի և մուլտֆիլմերի համար, որոնք մեծ ժողովրդականություն են վայելում:

«Երկիր հայրենի» երգը Ամիրխանյանը գրել է ռեժիսոր Հենրիկ Մալյանի «Հայրիկ» ֆիլմի համար: Երբ Մալյանը կոմպոզիտորի առջև խնդիր դրեց ֆիլմի համար ընտրել որևէ ժողովրդական երգ, որը լավագույնս կբնութագրեր հայրենիքի հետ խոր թելերով կապված Հայրիկի կերպարը, կոմպոզիտորն առաջարկեց փորձել ներկայացնել նույն նկարագրով սեփական ստեղծագործության տարբերակը: Եթե երգը հավանության արժանանար, կկիրառվեր ֆիլմում, իսկ հակառակ դեպքում կփնտրեին ֆոլկլորային երգ: Այսպիսով՝ Ամիրխանյանը ստեղծեց «Երկիր հայրենի» երգը, որի խոսքերն ու երաժշտությունը նրա մտքում ծնվել են միասին, փոխկապակցված: Երգը ոչ միայն հավանության արժանացավ և կիրառվեց ֆիլմում անզուգական կատարող Հայրիկ Մուրադյա-



Ռոբերտ
Ամիրխանյան

նի ճայնով, այլև ժամանակի ընթացքում դարձավ հայ ժողովրդի միասնականության խորհրդանիշ: Ավելի ուշ Վազգեն Սարգսյանի հրամանով այն դարձավ հայոց բանակի հիմներգը:

Ունկնդրում

Ունկնդրե՛ք երգը «Հայրիկ» ֆիլմից՝ Հայրիկ Մուրադյանի կատարմամբ, հեղինակի կատարմամբ, ապա սովորե՛ք երգել այն:



Ռոբերտ Ամիրխանյան
«Երկիր հայրենի»

Ռոբերտ Ամիրխանյան
«Երկիր հայրենի»



ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Ռոբերտ Ամիրխանյան

Ե-րա-զի իմ եր-կիր հայ - րե - նի, հոգ-սե - թըդ շատ, հույ-սըդ
մեծ, քար-քա-րոտ եր - կիր: Ես մի բուռն եմ
քո հո - դի, ես մի ծիլն եմ քո ար-տի, ես մի թերթն եմ քո ծաղ-կի,
հայ-րե - նի եր - կիր, կիր, Հա - յաս -
տան: Հա - յա - տան, Հա - յա - տան:

Երագի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, լույսդ մեծ,
Արժվաբույն երկիր:
Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են քեզ պահել,
Քոնն են որդիքն իմ շահել,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի զարկն եմ քո բազկի,
Ես մի շուղն եմ քո հասկի,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Հարցեր և առաջադրանքներ

- Դուք արդեն գիտեք թե՞ ժողովրդական երգի վրա հիմնվող ստեղծագործություններ, թե՞ կոմպոզիտորի ինքնուրույն մեղեդիներով ստեղծված երգեր: Քննարկե՞ք դրանց նմանություններն ու տարբերությունները:
- Քննարկե՞ք ձեր սովորած երգերի բանաստեղծական տեքստերի հեղինակներին: Փորձե՞ք ներկայացնել նրանց ոճը: Արդեն շատ լավ գիտեք, որ բանաստեղծը նույնպես կարող է գրել այնպիսի տեքստ, որը նման է ժողովրդական ստեղծագործությանը: Քննարկե՞ք այսպիսի փորձը Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործության օրինակով: Ինչպիսի՞ն է երաժշտությունը: Արդյո՞ք այն նույնպես նման է ժողովրդականին: Ինչո՞ւ:
- Հավաքե՞ք տեղեկություններ ձեր սովորած երգերի հեղինակների մասին: Կազմե՞ք տեսասահիկներ նրանցից յուրաքանչյուրի կյանքի ու ստեղծագործության մասին: Կարևորե՞ք այն ժամանակափուլը, երբ ապրել է տվյալ կոմպոզիտորը:

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ



Երաժշտությունն անցել է զարգացման տարբեր փուլեր՝ համապատասխան մարդկության զարգացմանը: Դասական երաժշտությունն այդ փուլերից մեկն է:

Դասական երաժշտություն հասկացողությունը կիրառվում է երկու իմաստներով.

- 18-րդ դարի կոմպոզիտորական երաժշտության ոճը, որի հիմքում երաժշտության ձևի և բովանդակության կատարյալ համակցության սկզբունքն էր:

- Լայն ընդգրկումով կոմպոզիտորական երաժշտությունը, որը զարգացել է դարերի ընթացքում, մեծ վերելք է ունեցել 17-20-րդ դարերում և շարունակում է զարգանալ 21-րդ դարում:

Գոյություն ունեն նաև ազգային դասական երաժշտական դպրոցներ՝ ռուսական, լեհական, իսպանական, նորվեգական և

այլն: Հայկական կոմպոզիտորական արվեստն էլ անվանում ենք հայ դասական երաժշտություն:

Դասական երաժշտության մեջ բազմաթիվ են լայն ճանաչում ունեցող նմուշները: Գոյություն ունեն երաժշտական ստեղծագործություններ, որոնք ստեղծման և առաջին կատարման պահից սկսած վայելում են հանդիսատեսի սերը: Լինում են դեպքեր, երբ ժամանակ է պահանջվում ստեղծագործության հանրահռչակման համար:

Այսպես, հանճարեղ Յոհան Սերաստիան Բախն (1685–1750) իր ժամանակում ավելի շատ հայտնի էր որպես կատարող՝ երգեհոնահար, ոչ թե կոմպոզիտոր: Նրա գլուխգործոցներից շատերն իրենց արժանի գնահատականին են արժանացել կոմպոզիտորի մահից շատ տարիներ անց:

*Իսկ իտալացի օպերային կոմպոզիտոր Ջուզեպպե Վերդիի (1803–1901) օպերաների առանձին դրվագներ հանրային լայն ճանաչում էին ստանում դեռևս մինչև բեմ բարձրանալը: Խնդիրն այնքան լուրջ էր, որ Վերդին սկսում է լուրջ միջոցներ ձեռնարկել իր արիաները առաջին կատարումից առաջ գաղտնի պահելու ուղղությամբ: Մի անգամ նա որոշում է «Ռիգոլետտո» օպերայի **La donna è mobile** (թարգմանաբար՝ «Կինը փոփոխական է») արիան օպերայի մեներգչին սովորեցնել նավակի մեջ, որպեսզի ոչ ոք չլսի, և արիան ներկայացումից առաջ չտարածվի: Հաջորդ օրն ամբողջ քաղաքը երգում էր արիան: Պարզվում է, որ նավակավարը լավ երաժշտական լսողություն ուներ, և հենց նա է դարձել արիայի տարածողը:*



Լայպցիգ քաղաքի Թոմաս
Եկեղեցու երգեհոնը:
Այս եկեղեցում է աշխատել
Յ. Ս. Բախը:



Վենետիկի օպերային թատրոնի դահլիճը, որտեղ առաջին անգամ բեմադրվել է «Ռիգոլետտո» օպերան:

Ունկնդրում

Ունկնդրե՞ք Յոհան Սեբաստիան Բախի «Տոկկատա և ֆուգա»-ն: Ուշադրություն դարձրե՞ք, թե ինչպես է հնչում երգեհոնը, որը Բախի սիրելի երաժշտական գործիքներից էր:



Յոհան Սեբաստիան Բախ
«Տոկկատա և ֆուգա»

Ունկնդրում

Ունկնդրե՞ք Զուլեպպե Վերդիի **La donna è mobile** արիան Լուչանո Պավարոտտի կատարմամբ: Քննարկե՞ք, թե ինչ հատկանիշների շնորհիվ կարող էր այն տարածվել հանդիսատեսի շրջանակներում մինչև առաջին բեմելը:

Զուլեպպե Վերդի
La donna è mobile



ՎԻԵՆՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

18-րդ դարի երաժշտությունը պատմության մեջ առանձնահատուկ դիրքեր է գրավում, քանի որ հենց այդ ժամանակափուլում են վերջնականորեն ձևավորվել դասական երաժշտության ձևերն ու սկզբունքները: Այս գործընթացում հատուկ դեր են ունեցել երեք կոմպոզիտորներ, որոնք գործունեություն էին ծավալում Վիեննայում՝ Յոզեֆ Հայդնը, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը և Լյուդվիգ վան Բեթհովենը: Երեք կոմպոզիտորների գործունեությունն ու այդ ժամանակափուլն ընդունված է անվանել «Վիեննական դասական դպրոց»:

Բարբարա Կրաֆտ (1764–1825)
«Մոցարտի հետմահու դիմանկարը» (1819)



Յոզեֆ Կառլ Շտիլեր
(1781–1858)
«Լյուդվիգ վան Բեթհովենի
դիմանկարը» (1820)

Լյուդվիգ Գուտենբրուն (1750–1819)
«Յոզեֆ Հայդնի դիմանկարը»
(1790–ականներ)



Յոզեֆ Հայդնը (1732–1809), որը երեք կոմպոզիտորներից ամենաավագն էր, գրել է մեծ քանակությամբ ստեղծագործություններ. այդ թվում՝ 104 սիմֆոնիա, 24 օպերա, մեծաքանակ դաշնամուրային և անսամբլային ստեղծագործություններ և այլն:



XVIII դար, անհայտ հեղինակ
Հայդնը լարային կվարտետ
նվագելիս

Կվարտետը չորս երաժշտական գործիքի մասնակցությամբ ստեղծագործություն է: Դասական երաժշտության մեջ շատ տարածված են լարային կվարտետները:

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը (1756–1791) երաժշտության պատմության ամենահինքնատիպ ներկայացուցիչներից է: Նա հրաշամանուկ է եղել և վաղ տարիքից աչքի է ընկել զարմանալի երաժշտական ունակություններով: Երեք տարեկանից նվագել է կլավեսին, հինգ տարեկանից ստեղծագործել է, ութ տարեկանում արդեն սիմֆոնիա է հեղինակել և այլն: Փոքր տարիքից իր քրոջ և հոր հետ համերգներով ճամփորդել է ամբողջ Եվրոպայով՝ ամենուրեք մարդկանց զարմացնելով և հրապուրելով իր ստեղծագործություններով և կատարումներով:

Մի անգամ, երբ Միցարտը 14 տարեկան էր, համերգային շրջագայություններից մեկի ընթացքում այցելում են Վատիկան: Զատկական շաբաթն էր: Վատիկանի Սիքստինյան կապելլայում, որի որմնանկարների հեղինակը Միքելանջելոն է, ամեն տարի Ավագ շաբաթվա (այսինքն՝ Զատկական շաբաթվա) չորեքշաբթի և ուրբաթ օրերին հնչում էր իտալացի կոմպոզիտոր, Վերածնունդի դարաշրջանի ներկայացուցիչ Գրեգորիո Ալլեգրիի **Miserere mei, Deus**-ը (հայերեն՝ «Ողորմեա ինձ, Տէր»)՝ գրված քառաձայն երգչախմբի և չորս մենակատար երգիչների համար, որոնք վերջում երգում են միասին՝ ինը ձայնով: Այս ստեղծագործությունը համարվում էր Հռոմի պապի սեփականությունը, և արգելվում էր դրա տարածումը Վատիկանից դուրս: 14-ամյա Միցարտը ստեղծագործությունը լսում է և այն ամբողջությամբ գրի է առնում՝ փաստորեն դառնալով նրա տարածողը: Այնուամենայնիվ, Միցարտին չեն պատժում արարքի համար, որովհետև նա ամբողջ Եվրոպայի սիրելին էր:



Լուի Կարոժի Կարմոնտել (1717–1806) Նկարում պատանի Միցարտը կլավեսին է նվագում, հայրը՝ ջութակ, իսկ քույրը երգում է (1763):



Վատիկանի Սիքստինյան կապելլայի պատը, որի վրա Միքելանջելոյի (1475–1564) «Ահեղ դատաստան»-ն է (1537–1541):

Ունկնդրե՛ք Գրեգորիո Ալլեգրիի (1582–1652) **Miserere mei, Deus**-ից հատված, ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպիսի հնչողություն ունեն Վերածնունդի դարաշրջանի երաժշտությունը:



Գրեգորիո Ալլեգրի
Miserere mei, Deus

Մոցարտը գրել է դասական տարբեր ժանրերում, այդ թվում՝ օպերաներ, սիմֆոնիաներ, կվարտետներ, սոնատներ և բազմաթիվ այլ ստեղծագործություններ:

Դասական երաժշտության ամենից տարածված ձևերից մեկը **սոնատն** է: Սոնատ բառը մի դեպքում ժանր է ենթադրում, օրինակ՝ դաշնամուրային սոնատ, ջութակի սոնատ և այլն: Մյուս դեպքում այն որոշակի երաժշտական ձև է նշանակում:

Սոնատի ձևը հիմնվում է երկու հակադիր կերպարային ուղորտների վրա, որոնց զարգացումը ստեղծագործության հիմքն է կազմում: Այս ձևը բաղկացած է երեք բաժիններից: Առաջինի ընթացքում ցուցադրվում են երկու հակադիր կերպարները, որոնք ընդունված է անվանել գլխավոր և օժանդակ, և որոնցից յուրաքանչյուրը կարող է ներկայանալ մեկ, երկու, երբեմն ավելի թեմայով: Երկրորդ բաժինը մշակումն է, որի ընթացքում թեմաները մշակման են ենթարկվում, փոփոխվում, իրար հակադրվում, տարբեր փոխակերպումներով հնչում և այլն: Երրորդ բաժնում երկու կերպարներին պատկանող թեմաները հնչում են նորից, բայց արդեն միմյանց նմանված, միմյանց հարազատացած:

Սոնատի ձևն առավել հաճախ հանդիպում է որպես ավելի խոշոր ստեղծագործության առանձին մաս: Այսպես, դասական սիմֆոնիաները հիմնականում բաղկացած են չորս մասից, որոնցից առաջինը հիմնականում սոնատային ձև ունի: Սոնատի ձև կարող են ունենալ նաև այլ մասերը:

Մոցարտի Քառասուներորդ սիմֆոնիան քառամաս կառուցվածք ունի, և առաջին մասը գրված է սոնատային ձևում:

Ունկնդրում

Ունկնդրե՞ք առաջին մասը և ուսուցչի օգնությամբ հետևե՞ք նրանում սոնատային ձևի զարգացման ընթացքին: Բնութագրե՞ք գլխավոր և օժանդակ պարտիաները (0:00 և 0:42 վայրկյաններ), դրանց մշակման ընթացքը (3:20–ից սկսած):

*Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
Քառասներորդ սիմֆոնիա*



Լյուդվիգ վան Բեթհովենն (1770–1827) իր էությամբ ներկայացնում է իր ժամանակի կոմպոզիտորի այլ՝ տարբերվող կերպար, որի ինքնագնահատականն ավելի բարձր է, և որն ինքն իրեն համարում է ազատ մարդ:

Մի անգամ նա մի իշխանի պալատում էր: Իշխանը խնդրում է Բեթհովենին նվագել իր հյուրերի համար, սակայն Բեթհովենը հրաժարվում է: Իշխանը փորձում է նրան համոզել, ապա՝ ստիպել, բայց Բեթհովենը բարկացած լքում է նրա պալատը և վերադառնում իր տուն: Այնուհետև Բեթհովենը նամակ է գրում իշխանին. «Իշխան, այն բանի համար, ինչ ես կամ, ես պարտական եմ ինձ: Կան և կլինեն հազարավոր իշխաններ, իսկ Բեթհովենը մեկն է»:

Ունկնդրում

Բեթհովենը գրել է սիմֆոնիաներ, սոնատներ, կվարտետներ, օպերա և այլն, որոնցից յուրաքանչյուրը յուրահատուկ ասելիք ունի: Այսպես, Հինգերորդ սիմֆոնիայի թեմայի մասին հեղինակն ասել է. «Այսպես է ճակատագիրը բախում դուռը»:

*Լյուդվիգ վան Բեթհովեն
Հինգերորդ սիմֆոնիա*



Իր կառուցվածքով և օգտագործված միջոցներով առանձնանում է Բեթհովենի **Իններորդ սիմֆոնիան**: Կոմպոզիտորը ստեղծագործությունը գրել է այն ժամանակ, երբ խլացել էր և բուրդովին չէր լսում: Լսողության խնդիրը, որը կոմպոզիտորի մոտ սկսվել էր 25 տարեկանից ու գնալով խորացել, նրա մեծ տառապանքի պատճառն է եղել:

Իններորդ սիմֆոնիայում կոմպոզիտորը կիրառել է ձայն և երգչախումբ՝ դրանք համակցելով սիմֆոնիկ նվագախմբին: Այս առումով կոմպոզիտորը շատ համարձակ էր, որովհետև մինչ այդ ընդունված չէր սիմֆոնիայում մարդկային ձայն օգտագործել:

Իններորդ սիմֆոնիայի բանաստեղծական տեքստը Ֆրիդրիխ Շիլլերի «Ձոն ուրախության» պոեմից մի մաս է, որի հիմքում մարդկությանն ուղղված եղբայրության ու միասնության կոչն է:

Սիմֆոնիայի առաջին կատարումը մեծ հաջողությամբ անցավ: Բեթհովենը, որպես դիրիժոր, կանգնել էր մեջքով դեպի հանդիսատեսը և ոչինչ չէր լսում: Այդ ժամանակ երգիչներից մեկը բռնում է նրա ձեռքը և նրան շրջում դեպի հանդիսատեսը: Մարդիկ թափահարելով թաշկինակները, գլխարկները, ձեռքերը՝ ողջունում էին կոմպոզիտորին: Ծափահարություններն այնքան երկար տևեցին, որ այնտեղ ներկա անվտանգության ներկայացուցիչները պահանջեցին դադարեցնել այն: Այդպիսի վերաբերմունք թույլատրվում էր դրսևորել միայն կայսեր նկատմամբ:

ՈՆԿՆԴՐՈՒՄ

Ոնկնդրեք Իններորդ սիմֆոնիայից մի հատված:



Լյուդվիգ վան Բեթհովեն
Իններորդ սիմֆոնիա

ՌՄՄԱՆՏԻԶՄ

1789 թ. Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը և հետագա քաղաքական իրողությունները լրջորեն ազդեցին մարդկանց մտածողության վրա, ինչն արտացոլվեց նաև արվեստում և երաժշտության մեջ: Ֆրանսիայում միապետությունից հանրապետություն անցումն ընթանում էր «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսով: Այդուհանդերձ, հեղափոխությունից հետո մարդկանց սպասելիքները չիրականացան, ավելին՝ իրավիճակն ավելի վատթարացավ: Արդյունքում երաժշտության

(և առհասարակ արվեստի) զարգացման մեջ տեղի ունեցավ ճակատագրական փոփոխություն: Արվեստագետներն սկսեցին կյանքի վերաբերյալ չիրականացված երազանքներն արտացոլել իրենց ստեղծագործություններում, ինչի արդյունքում երաժշտության մեջ հույզերը բանականության նկատմամբ գերիշխող դարձան՝ ի հակադրություն 18-րդ դարի դասական երաժշտության: Այսպես գոյացավ **ռոմանտիզմ** կոչվող ուղղությունը, որը վերաբերում է 19-րդ դարի երաժշտությանն ու արվեստին:

Ռոմանտիզմի երաժշտությունը շարունակում է դասական ավանդույթները՝ նոր գաղափարներով, նոր բովանդակությամբ և դասական երաժշտական ժանրերի ու ձևերի նոր փոխակերպումներով:

Էլ ավելի առաջնային դիրքերում հայտնվեց գեղեցիկ մեղեդիներ ստեղծելու ավանդույթը: Մինչ այդ նույնպես կոմպոզիտորները հորինում էին գեղեցիկ մեղեդիներ, սակայն դա չէր նրանց հիմնական խնդիրը, այլ ավելի շատ կարևորում էին ստեղծագործության ձևը, գաղափարը, երաժշտության ընթացքը և այլն:

Ֆրանց Շուբերտի (1797–1828) երգերը ռոմանտիզմի բնորոշ օրինակներ են:

Մի անգամ նա դաշնամուրի մոտ նստած ստեղծագործում էր, երբ ներս մտավ իր ընկերներից մեկը: Հարցին, թե ինչ է անում, Շուբերտը պատասխանեց. «Ոչինչ չստացվեց»: Այս ասելով՝ նա ձեռքի նոտային թուղթը ճմռթեց և նետեց աղբարկղ: Ընկերը ներս եկավ, զրուցեցին, շփվեցին, իսկ հրաժեշտ տալու ժամանակ նա աննկատ աղբարկղից հանեց թուղթը և տարավ իր հետ: Պարզվում է՝ Շուբերտի նետած այդ թղթի մեջ **Ave Maria**-ն էր, որը հետագայում պիտի դառնար ռոմանտիզմի և անձամբ Շուբերտի ամենախորհրդանշական երկերից մեկը:

Ave Maria նշանակում է «Ողջոյն, Մարիամ»: Այս նույն վերնագրով երգեր ունեն տարբեր դարաշրջանների բազմաթիվ կոմպոզիտորներ: Դրանց հիմքում մեծ մասամբ Աստվածաշնչից քաղված տեքստ է: Շուբերտը, ի տարբերություն այլ կոմպոզիտորների, կիրառել է ոչ թե աստվածաշնչյան տեքստը, այլ հատված շոտլանդացի բանաստեղծ Վալտեր Սքոթի «Լճի տիրուհին» պոեմից՝ գերմաներեն թարգմանությամբ: Վալտեր Սքոթի պոեմի հիման վրա կոմպոզիտորն ստեղծել է 7 երգից բաղկացած շարք, որոնցից վեցերորդը վերնագրված է «Էլենի երրորդ երգը»: Հենց այս երգն էլ հայտնի է որպես Ave Maria:




Ջոակինո Ռոսսինի (1792–1868). «Վիլիելմ Տելլ»

Վիլիելմ Տելլը շվեյցարական ժողովրդական առասպելական հերոս է: Ըստ լեգենդի՝ նա հմուտ լեռնագնաց էր և անվրեպ նետաձիգ: Առասպելում գործողությունները վերաբերում են 1300–ականներին: Շվեյցարացիները Հաբսբուրգների ավստրիական կայսրության տիրապետության տակ էին, և լեգենդը նրանց դեմ ժողովրդական պայքարի մասին է:

Ավստրիական պաշտոնյան, լսելով Վիլիելմ Տելլի՝ նետաձգության ձիրքի մասին, ստիպում է, որ Տելլը իր փոքր որդու գլխին խնձոր դնի և նետով խնձորը բաժանի երկու մասի: Տելլը կատարում է առաջադրանքը, բայց նաև շատ է զայրանում և որոշում է վրեժխնդիր լինել: Նրա նախաձեռնությամբ էլ սկսվում են ապստամբություններն ընդդեմ բռնակալության:

Այս լեգենդի հիման վրա դրամա է հեղինակել Ֆրիդրիխ Շիլլերը: Նույն թեմայով էլ օպերա է գրել իտալացի մեծանուն կոմպոզիտոր Ջոակինո Ռոսսինին, որը հայտնի է իր օպերային ստեղծագործություններով: Ռոսսինին գրել է թե՛ կատակային, թե՛ դրամատիկական, թե՛ պատմական թեմաներով օպերաներ: «Վիլիելմ Տելլը» պատմա–առասպելական օպերա է, որը գրվել է ֆրանսերեն Ֆրանսիայի կառավարության պատվերով: 1829 թ. ստեղծված այս օպերան այնքան մեծ տարածում է ունեցել և սիրվել, որ դեռևս իր կենդանության օրոք կոմպոզիտորը ներկա է եղել նրա 500–րդ ներկայացմանը:

Օպերային ստեղծագործությունները հաճախ ունենում են նախերգանք, որը բուն գործողություններին՝ սյուժեի զարգացմանը նախորդող և այն ընդհանրացնող գործիքային ծավալուն դրվագ է:



Նկարում պատկերված է այն դրվագը, երբ Վիլհելմը նետով բաժանում է իր որդու գլխին դրված խնձորը:



Ռիխարդ Կիպլինգ (1848–1919)
Վիլհելմի և իր որդու այս արձանը
Շվեյցարիայի Ալթդորֆ քաղաքում է:

Ունկնդրում

Ունկնդրե՛ք «Վիլհելմ Տելլ» օպերայի նախերգանքը:

Զոակինո Ռոսսինի
«Վիլհելմ Տելլ»



Կամիլ Սեն-Սանս (1835–1921)

«Կենդանիների շքահանդես»

Ֆրանսիացի մեծանուն կոմպոզիտոր Կամիլ Սեն-Սանսը գործունեություն է ծավալել Փարիզում, որը երաժշտության և արվեստների կենտրոն էր: Նա հեղինակել է բազմաթիվ սիմֆոնիկ, օպերային, բալետային և այլ ստեղծագործություններ: Այդ շարքում «Կենդանիների շքահանդես» սյուիտն առանձնանում է նրանով, որ կոմպոզիտորն ինքը չէր կարևորում այս ստեղծագործությունը: Այն համարում էր հումորային, անլուրջ և արգելում էր տպագրությունը՝ մտածելով, թե այն կարող է վատ անդրադառնալ իր հեղինակության վրա: Կոմպոզիտորը կարծում էր, որ դրա փոխարեն պետք է գրեր նոր սիմֆոնիա:

Սյուիտը բազմամաս ստեղծագործություն է, որտեղ մեկ շարքի մեջ են համատեղվում ավարտուն պիեսներ:

«Կենդանիների շքահանդեսը» կոմպոզիտորի կյանքի օրոք համերգային բեմահարթակ չի բարձրացել. կատարել են մասնավոր առիթների ժամանակ: Սեն-Սանսի մահից հետո ստեղծագործությունը տպագրել են, և այն սկսել է հնչել տարբեր համերգային սրահներում՝ նվաճելով ունկնդիրների հատուկ սերը:

14 մասից բաղկացած այս ստեղծագործությունը ծրագրային է:

Ծրագրային ենք անվանում երաժշտության այն տեսակը, որն ունի ոչ երաժշտական բովանդակային հիմք: Օրինակ՝ կոմպոզիտորը կարող է գրական ստեղծագործության հիման վրա գրել երկ, որտեղ չի կիրառվում գրական տեսքտ, սակայն նրա բովանդակությունն է ձևավորում երաժշտությունը: Մեկ այլ դեպքում կոմպոզիտորը կարող է գրել երաժշտական ստեղծագործություն գեղանկարչական աշխատանքների տպավորությամբ: Սեն-Սանսի այս ստեղծագործությունը ծրագրային է, որովհետև նկարագրում է կենդանիների: Այսինքն՝ այն կենդանիների մասին է, որոնք ներկայացվում են միայն երաժշտական միջոցներով:

Յուրաքանչյուր մաս ներկայացնում է որոշակի կենդանի՝ առյուծ, հավ ու աքաղաղ, կրիա, փիղ, կենգուրու, կկու, կարապ, կամ կենդանիների որոշակի խումբ, օրինակ՝ արագավազ կենդանիներ, ջրային ու երկարականջ կենդանիներ, թռչնաշխարհ: Մասերից մեկում կոմպոզիտորը կատակային ենթատեքստով նկարագրում է դաշնակահարին կենդանիների շարքում:

Երբեմն ստեղծագործության կատարման ժամանակ երաժիշտները դնում են համապատասխան կենդանու դիմակը:

Ունկնդրում

Ունկնդրե՛ք «Կենդանիների շքահանդես»-ը:

Կամիլ Սեն-Սանս
«Կենդանիների շքահանդես»



Առաջադրանք

- Առաջին ունկնդրումի ընթացքում փորձե՛ք ինքներդ գուշակել, թե մասերից յուրաքանչյուրը որ կենդանուն կամ որ կենդանախմբին է ներկայացնում: Պատասխանը վերարտադրե՛ք նկարելու միջոցով: Վերջում համեմատե՛ք պատասխանները, այնուհետև կարդացե՛ք և իմացե՛ք իրական կենդանիների ու խմբերի մասին ճիշտ պատասխանները:

- Առաջադրանքը կարող եք իրականացնել խմբերով: Հաղթում է այն խումբը, որն ավելի շատ կենդանիներ ու խմբեր է ճիշտ գուշակել:

- Քննարկե՛ք, թե ինչ միջոցներով է կոմպոզիտորը նկարագրել յուրաքանչյուր կենդանուն: Դուրս բերե՛ք նկարագրական տարրերը:

ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ

Եթե նախորդ ժամանակափուլերում յուրաքանչյուր դարաշրջան ուներ իր բնորոշ երաժշտական ոճը, ապա 20-րդ դարի երաժշտության մեջ մեկ ընդհանուր ոճական ուղղություն գոյություն չունի: Տարբեր ոճերը զարգացել են իրար զուգահեռ: Այդպես առաջացել են իմպրեսիոնիզմ, էքսպրեսիոնիզմ և բազմաթիվ այլ ուղղություններ:

Իմպրեսիոնիստական երաժշտություն

Դեռևս 19-րդ դարի 70–80-ականներից Փարիզում գործունեություն էին ծավալում մի խումբ նկարիչներ, որոնց նկարչական սկզբունքները նոր էին: Այսպես, նրանք հրաժարվեցին արվեստանոցում աշխատելու ընդունված ձևից և դուրս եկան բնության գիրկ: Սկսեցին վերարտադրել բնությունը, տարբեր երևույթները, նաև մարդկանց՝ որոշակի պահի տպավորությամբ: Նրանք ամրագրում էին տվյալ պահը, ուստի ծառերն ու թփերը, շենքերն ու բակերը, նաև մարդիկ պատկերվում էին շարժման մեջ որոշակի պահի: Այս նկարիչները կիրառում էին մեղմ գույներ, իսկ գծերը շղարշված էին:

Կլոդ Մոնե (1840–1926)
«Տպավորություն.
արևածագ» (1872)

Կտավը
Փարիզի Մարմոտան Մոնե
թանգարանում է:



1874 թ. Փարիզում այս նկարիչները մեծ ցուցահանդես կազմակերպեցին, որից հետո հատկապես քննադատները նրանց ծաղրանքով վերաբերվեցին և նրանց անվանեցին **իմպրեսիոնիստներ** (**իմպրեսիոն** թարգմանաբար նշանակում է «տպավորություն»): Հիմնական առիթը եղավ նկարիչ Կլոդ Մոնեի «Տպավորություն. արևածագ» կտավը:

Նկարչության այս ուղղությանը զուգահեռ Ֆրանսիայում զարգացավ նաև երաժշտական իմպրեսիոնիզմը, որը ներկայանում է նուրբ և թափանցիկ հնչողությամբ, փափուկ երաժշտական երանգներով և նոր ձևերով: Կոմպոզիտորների համար հատկապես հարազատ էր գեղարվեստական կերպարը փոքր ծավալի ստեղծագործությունների միջոցով ներկայացնելու սկզբունքը:

Ֆրանսիացի **Կլոդ Դեբյուսիս** (1862–1918) իմպրեսիոնիզմի վառ ներկայացուցիչներից է: Նրա «Ֆավնի հետկեսօրյա հանգիստը» ստեղծագործությունը սիմֆոնիկ պոեմ է՝ գրված ֆրանսիացի բանաստեղծ Ստեֆան Մալարմեի համանուն պոեմի ազդեցությամբ:

Երբ Ստեֆան Մալարմեն տեղեկացել է, որ Դեբյուսիսն իր պոեմի հիման վրա երաժշտական երկ է գրում, դժգոհություն է հայտնել՝ ասելով, որ իր պոեմն արդեն իսկ երաժշտական է: Սակայն համերգին ստեղծագործությունն ունկնդրել ու շատ է հավանել, ինչի առիթով իր գոհունակությունն անձամբ է հայտնել կոմպոզիտորին:

Ֆավնը անտիկ դիցաբանության մեջ կիսամարդ-կիսաայծ կերպար է, որն ապրում է անտառում: Ստեղծագործության մտահղացմամբ՝ ֆավնը կեսօրվա շոգին պառկած է սաղարթախիտ ծառի ստվերում, նվագում է իր գործիքը՝ պանի ֆլեյտան, իսկ նրա շուրջը պար են բռնել նիմֆերը, որոնք, հին հունական լեգենդի համաձայն, բնությունն անձնավորող կերպարներ են, ու նայադները, որոնք ջրային նիմֆեր են: Ֆավնը խոր քնի մեջ է հայտնվում և տեսիլքներ ունենում, որ տիրանում է Բնությանը: Այս խորհրդանշական սյուժեն հիմք է դարձել Դեբյուսիսի ստեղծագործության համար:

Պանի ֆլեյտան իր անունը ստացել է
հին հունական դիցաբանության
Պան աստվածությունից, որը զուգա-
հեռներ ունի ֆավնի հետ:
Գործիքը բաղկացած է հետզհետե մե-
ծացող խողովակներից:
Այն շատ տարածված է զանազան ազ-
գերի ժողովրդական արվեստներում:



Ունկնդրում

Ունկնդրե՛ք Դեբյուսիի այս ստեղծագործությունը:
Հետևե՛ք ֆլեյտայի թեմային, որը
նկարագրում է ֆավնին:



Կլոդ Դեբյուսի
«Ֆավնի հետկեսօրյա հանգիստը»

ԲԱՌԱՐԱՆ

աբեղա	ոչ ամուսնացյալ՝ կուսակրոն քահանա
աշուղ	Միջին Ասիայում և արևելյան մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում գործող երաժիշտ-երգիչ
ասացող	էպոսը ներկայացնող անձը
ավետիս	Սուրբ Ծնունդի երգ
բազմաձայն	մեկից ավելի ձայների միասնությամբ կատարվող
բանահավաք	երգեր, պարեր, հեքիաթներ, ժողովրդական զրույցներ հավաքող և գրի առնող մասնագետ
բանահավաքչություն	ֆոլկլորը ժողովրդից գրառելու գործընթաց
գուսան	հայ վաղ միջնադարյան երաժիշտ-երգիչ
դավթար	գիրք կամ մատյան. այսպես են կոչվել Սայաթ-Նովայի ստեղծագործությունների ժողովածուները
լարային կվարտետ	չորս լարային գործիքի համար գրված ստեղծագործություն
ծրագրային երաժշտություն	գործիքային երաժշտություն՝ գրված որոշակի թեմայով, օրինակ՝ հիմնված նկարչության կամ գրական ստեղծագործության սյուժեի վրա
կալսել	բերքահավաքից հետո նյութերը վերամշակելը
կլավեսին	դաշնամուրին նախորդող նվագարան
կվարտետ	չորս երաժշտական գործիքի մասնակցությամբ ստեղծագործություն
կրող	ժողովրդական երգ ու պարը բնական միջավայրում սովորած և իմացող անձ
հոռովել (հորովել)	հողագործության կամ երկրագործության հետ կապված երգ
միաձայն	մեկ ձայնով վերարտադրվող
նախերգանք	մեծակտավ ստեղծագործության (օպերա, բալետ և այլն) նախաբան-մուտքը

ռեգիստր	հնչողության ձայնաձավալը, դիրքը, տարածքը, որը կարող է լինել բարձր, միջին, ցածր
սյուիտ	բազմամաս ստեղծագործություն, որտեղ մեկ շարքի մեջ են համատեղվում ավարտուն պիեսներ
սոնատ	որոշակի ձևով գրված գործիքային ստեղծագործություն
վարդապետ	եկեղեցական գիտական աստիճան
վարձակ	հայ վաղ միջնադարյան կին երաժիշտ–երգիչ
վիճակի երգ	Համբարձման տոնին վիճակահանության ընթացքում կատարվող երգ
վոկալ	ձայնով վերարտադրվող
տաղասաց կամ տաղերգու	միջնադարյան երաժիշտ–երգիչ
քաղհան	դաշտը անպիտան խոտերից ու բույսերից մաքրելը
փանդիռ	միջնադարյան Հայաստանում տարածված նվագարան
ֆոլկլոր	ժողովրդական մշակույթ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- ԱԼԼԵԳՐԻ Գրեգորիոս 98–99
ԱՄԻՐԻԱՆՅԱՆ Ռոբերտոս 90–91, 111
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Վահան 89
ԱՎԱՆԵՍՈՎ Արթուր 80
ԱՎԵՏԻՍՅԱՆ Մինաս 40
ԲԱԲԱԶԱՆՅԱՆ Աննո 72–73, 81–83, 111
ԲԱԽ Յոհան Սեբաստիան 94–95
ԲԱՂԴԱՍԱՐ ԴՊԻՐ 58
ԲԱՅՐԱՔԴԱՐՅԱՆ Իզաբել 13
ԲԱՎԵՅԱՆ Գուրգեն 65
ԲԵԹՆՈՎԵՆ Լյուդվիգ վան 96, 100–101, 111
ԳՅՈՒՐՋԻ–ՆԱՎԵ 68
ԳՐԻՄ եղբայրներ 4
ԳՈՒՏԵՆԲՐՈՒՆ Լյուդվիգ 96
ԴԱՎՈՅԱՆ Ռազմիկ 87
ԴԵՔՅՈՒՍԻ Կլոդ 108–109, 111
ԵՎՄԱԼՅԱՆ Մակար 49, 53
ԷՐԱԿԼԵ 72
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Եղիշե 12
ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ Փանոս 50
ԹԵՔԵՅԱՆ Վահան 87
ԹՈՒՄԱՆՅԱՆ Հովհաննես 4, 31, 80
ԼՈՒՍԻԿՅԱՆ Ստեփան 87
ԼԵՎՈՆՅԱՆ Սերոբ 73
ԽԱԶԱՏՐՅԱՆ Արամ 4, 81
ԿԱՐԱ–ՄՈՒՐՋԱ Քրիստափոր 49
ԿԱՐՄՈՆՏԵԼ Լուի Կարոժի 98
ԿԻՍԼԻՆԳ Ռիխարդ 104
ԿՈՄԻՏԱՍ 8, 11–13, 20, 24, 26, 32, 34, 37,
49–54, 78–79, 84, 110
ԿՈՄԻՏԱՍ ԱՂՅԵՅԻ 52–53
ԿՐԱՖՏ Բարբարա 96
ՀԱՅԴՆ Յոզեֆ 96–97
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Էդգար 84–86, 111
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովհաննես 75
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ռուբեն 68, 76
ՄԱԼԱՐՄԵ Ստեֆան 108
ՄԱԼՅԱՆ Հենրիկ 90
ՄԵԼԻՔՅԱՆ Ռոմանոս 80–81, 92, 111
ՄԻՔԵԼԱՆՋԵԼՈ 98
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Նորայր 62
ՄՈՆԵ Կլոդ 107–108
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 42, 56
ՄՈՑԱՐՏ Վոլֆգանգ Ամադեուս 96–100, 111
ՄՈՒՐԱԴՅԱՆ Հայրիկ 15, 18, 40, 45, 48, 91
ՄՈՒՐԱԴՅԱՆ Սարգիս 25
ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱԿ 69
ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ 58
ՇԵՐԱՄ 75–76, 110
ՇԻԼԼԵՐ Ֆրիդրիխ 101, 103
ՇԻՐԻՆ 60
ՇՈՀՐԱՅԻ 70
ՇՈՒԲԵՐՏ Ֆրանց 102–103, 111
ՊԱՊՅԱՆ Հասմիկ 79
ՊԱՎԱՐՈՏՏԻ Լուչանո 95
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 86
ԶԱԼԱԼԻ 44, 65
ԶԻՎԱՆԻ 64, 73–75, 110
ՌԻԶԱՐԴ ԱՌՅՈՒԾԱՍԻՐՏ 68
ՌՈՍՍԻՆԻ Զոակինո 103–104, 111
ՌՈՒԻԿՅԱՆ Հրաչյա 71
ՍԱՅԱԴՅԱՆ Հարություն 71
ՍԱՅԱԹ–ՆՈՎԱ 62–63, 65, 68–69, 71–73,
110
ՍԱՐԳՍՅԱՆ Մարիամ 80
ՍԱՐԳՍՅԱՆ Վազգեն 91
ՍԱՐՅԱՆ Մարտիրոս 36
ՍԵՆ–ՍԱՆՍ Քամիլ 105–106, 111
ՍԻԱՅԻ 73–74
ՍՄԲԱՏՅԱՆ Արմեն 89, 111

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Սողոմոն 51-52
ՍՔՈԹ Վալտեր 102
ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ Ալեքսանդր 72-73
ՎԵՐԴԻ Զուգեպպե 94-95
ՎՈԶՆԵՍԵՆՍԿԻ Անդրեյ 83
ՏԱԼՅԱՆ Գրիգոր 75
ՏԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ 72
ՏԵՐՅԱՆ Վահան 84, 87
ՏԻԳՐԱՆՅԱՆ Արմեն 31
ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ 42
ՔՈՉԱՐ Երվանդ 43
ՔՐԱԶՅԱՆ Սերուժ 13

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Ալաշկերտ 47
Ալբանիա 44
Ալեքսանդրապոլ 73–75
Ալթորթ 104
Ախալքալաք 73
Անդրկովկաս 57
Ավստրիա 53
Արարատյան դաշտավայր 6
Արևմտյան Հայաստան 15, 21
Արցախ 6
Բեռլին 53
Գերմանիա 6, 53, 67
Գյումրի 73, 75, 87
Գողթն գավառ 56
Եգիպտոս 53
Եվրոպա 44, 67, 97–98
Երևան 58, 72–73, 80, 84, 87
Էջմիածին 52–53
Թիֆլիս 4, 53, 63, 72–73
Իտալիա 6, 53
Իրան 15
Իրաք 15
Լայպցիգ 95
Լոռի 7
Կարին 6
Կոստանդնուպոլիս 53
Կուտինա (Քյոթահիա) 51–52
Հաղպատ 72
Հայոց լեռնաշխարհ 7
Մերձավոր Արևելք 57
Մուղնի 63
Մուշ 6, 47
Շատախ 15, 40
Շվեյցարիա 53, 104
Սաղմոսավանք 7
Սասուն 6, 47
Սերբիա 44
Սիբիր 44
Սղերդ 47
Սյունիք 6
Ստեփանակերտ 80
Վան 15, 18
Վանա լիճ 6, 15
Վատիկան 98
Վենետիկ 95
Վերին Արտաշատ 15
Վիեննա 96
Փարիզ 8, 54, 105, 107–108
Քանաքեռ 49
Օշական 63
Օսմանյան կայսրություն 51
Ֆրանսիա 53, 67, 101, 103

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

- «Ահեղ դատաստան» 98
«Այգեպան, ինչ ես անում» 60
Անահիտ աստվածուհի 30, 33
Անսամբլ 45–46, 59–60, 65, 75, 97
Անտունի 10, 69, 84
«Անուշ անուրջով» 84–85
«Անուշ» օպերա 31
աշխատանքային գործիք 37–39, 110
աշխատանքային երգ 10, 36–38, 40, 110
աշուղ 55–61, 63–69, 73–74, 110
աշուղական 55, 57, 60–63, 65–75, 110
«Առանց քեզ ինչ կոնիմ» 68
Առասպել 3, 6, 42, 46, 59
«Առավոտուն բարի լուս» 51
Առտնին 35–36, 38, 40, 110
Ասացող 43
Աստղիկ աստվածուհի 33
Ավետիս, «Ավետիս» 28, 110
Արա և Շամիրամ 42
Արամ 42, 46
«Արևը կայնե կեսօր» 20
բալետ 31, 84, 87, 105
բայաթի 68
բանահավաք 8, 10, 17, 110
բանահավաքչություն 10–11, 17
բարբառ 6, 40
Բարեկենդան 10, 29, 110
«Գացեք, տեսեք» 29
գեղջկական 10, 66–67, 75, 110
Գիլգամեշ 44
գյովնդ 48, 17, 19–20, 27, 110
Գողթան երգիչեր 56
գութան 36–37
գուսան 56, 58–63, 110
գուսանական 57, 61, 67, 72
Գևորգյան ճեմարան 52
դասական երաժշտություն 6, 93–94, 96–97, 99, 102, 111
դավթար 72
Դավիթ (Սասունցի) 42–45, 84
դուբեյթ 69
«Դուն էն գլխեն իմաստուն իս» 72–73
«Դուն էն հուրին իս» 62, 65
երգեհոն 95
երկանք 38–39
«Երկիր հայրենի» 90–91
երկրագործական երգ 35–36, 110
«Զար, զընզը» 26
Էլենի երգ 102
«Էն դիզան» 24–25
Էպոս 10, 42–46
թագավոր և թագուհի 23–24
թամզարա, «Թամզարա» 17, 21–23
թառ 59, 75
Թոմաս եկեղեցի 95
Ժանր 3, 10, 44, 81, 99, 102, 110
Իլիական 44
Իլիկ 15, 39
իմպրեսիոնիզմ 107–108, 111
խաղիկ 18–19, 21, 26, 61
Խաչ Պատարագի 44
«Խելքի աշեցեք» 64, 75
խնոցի 38–40
«Խօրօս խարսնիկ» 15–16
«Ծաղիկ ունեմ նարնջի» 32
ծես 5, 10, 12, 31, 35, 61
Ծովինար 43
ծրագրային երաժշտություն 105

կալսել 35
 Կալևալա 44
 «Կայթ» նվագախումբ 45
 կատակերգ 5
 Կարապետ 63
 «Կարին» անսամբլ 45–47
 «Կաքավիկ» 78
 կենաց ծառ 23
 «Կենդանիների ջրահանդես» 105–106
 կլավեսին 97–98
 կոնսերվատորիա 53, 80, 84, 87
 կվարտետ 97, 99–100
 կրկնակ 18–19, 21, 26, 40
 կրող 10–11, 15, 17, 43, 110
 Հաբսբուրգների կայսրություն 103
 Համբարձում 10, 30–31, 110
 «Հայաստան» 89
 Հայկ և Բել 42, 46
 հայրեն 69
 հարսանեկան երգ 10, 23–24, 51, 61, 110
 հեքիաթ 3–4, 6, 10
 «Հոլ արա, եզո» 38
 «Հոյ, Նազան» 13, 18
 հռոճվել (հորովել) 35–37
 «Հով արեք» 8
 Հռիփսիմեի վանք 52–53
 Հռոմի պապ 98
 Հումբոլդտի համալսարան 53
 «Ձայն մը հնչեց» 48
 «Ձոն ուրախության» 101
 ճախարակ 38–39
 «Մանուկն ու ջուրը» 80–81
 Մատենադարան 58
 Մարիամ (Աստվածածին) 28, 102
 Մարութավանք 44
 մենակատար 18, 37, 98
 մենեստրել 67
 «Մեր տան հիտել» 18–19
 Մինեգենգեր 67
 Միեր 42–43, 45
 յարխուշտա 46–47
 նախերգանք 103–104
 «Նոր Հայաստան» 87
 շավալի 26–27
 «Շողակն» 60
 շորոր 17
 շուրջպար 17
 Ռդիսական 44
 պանդխտության երգ 10
 պանի ֆլեյտա 108–109
 պարերգ 5, 10, 18, 20–21, 23, 26, 34
 ռազմական երգեր 46, 110
 Ռամայանա 44
 ռեգիստր 44
 «Ռիզոլետտո» 94–95
 ռիթմ 23, 36, 40–41
 ռոմանտիզմ 101–102, 111
 սազ 59, 66, 75
 «Սայթ–Նովա» անսամբլ 65
 Սանասար և Բաղդասար 42–43
 սանդ 35, 38, 40
 սանդերք 38–39
 սանթուր 59, 66
 Սասնա Ծռեր 42–46
 «Սարդարապատ» 86
 սիմֆոնիա 97, 100–101, 105
 «Սիրո երգը» 82
 Սիքստինյան կապելլա 98
 սյուիտ 105
 «Սոնա յար» 34
 սոնատ 82, 99
 սոնատային ձև 99–100
 Սպենդիարյանի անվան օպերայի և
 բալետի թատրոն 31, 84
 «Վահագնի ծնունդ» 56
 Վարդավառ 10, 33–34, 110

վարդապետ 13, 50, 52
վարձակ 56
Վենետիկի օպերային թատրոն 95
Վերածնունդ 98–99
վերվերի 17, 20–21, 27, 48, 110
Վիեննական դասական դպրոց
(երաժշտություն) 96, 111
«Վիլհելմ Տելլ» 103–105
վիճակի երգ 31–32
վիպերգ, վիպական երգ 10, 42, 110
վոկալ 77, 80, 87
տաղասաց (տաղերգու) 55–58, 60, 72, 110
«Տննն էլար» 40–41
«Տոկկատա և ֆուգա» 95
Տորք Անգել 42, 46
«Տպավորություն. արևածագ» 107–108
տրուբադուր 67–68
տրուվեր 67
փանդիոն 56–57
«Փնջլիկ–մնջլիկ» 76
քաղիան 35
քյամանի 59, 66, 74
քամանչա 59
«Քանի վուր ջան իմ» 62, 72–73
Քանոն 59
«Քելեր, ցուլեր» 79
քնարական երգ 5, 10
քոչարի 17, 6, 46–48
Քուռկիկ Ջալալի 43–44
օպերա 4, 31, 65, 84, 94–95, 97, 100,
103–105
օրոր 10
«Ֆալսի հետկեսօրյա հանգիստը» 108–109
ֆոլկլոր 5, 10, 49–50, 90
Ֆրանսիական բուրժուական
հեղափոխություն 101
“Ave Maria” 102–103
“La donna è mobile” 94–95

“Miserere mei, Deus” 98–99
«Верни мне музыку» 83

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ ազգային երգեր և պարեր	3
Ժողովրդական երգ ու պար	5
Գեղջկական երգերի ժանրերը	10
Կրող և բանահավաք	10
Ազգային պար. գյովնդ և վերվերի	17
Ծիսական երգեր և պարեր	23
Հարսանեկան երգեր	23
Ծննդյան երգեր կամ ավետիսներ	28
Բարեկենդանի երգեր	29
Համբարձման երգեր	30
Վարդավառի երգեր	33
Աշխատանքային երգեր	35
Երկրագործական երգեր	35
Առտնին աշխատանքային երգեր	38
Աշխատանքային գործիքներ	39
Վիպական երգեր	42
Ռազմական երգեր ու պարեր	46
Կոմիտաս	49
Հայ աշուղական արվեստ	55
Գուսան, տաղերգու, աշուղ	56
Ժողովրդակա՞ն երաժշտություն, թե՞ այլ իրողություն	60
Բովանդակություն	62
Աշուղների կարգերը	66
Տաղաչափություն և տեխնիկա	68
Սայաթ-Նովա (1712–1795)	71
Զիվանի (1846–1909)	73
Շերամ (1857–1938)	75

Հայ կոմպոզիտորների երգարվեստը	77
Ժողովրդական ստեղծագործության վրա հիմնվող երգեր.	78
Ռոմանոս Մելիքյան (1883–1935)	80
Առնո Բաբաջանյան (1921–1983)	81
Էդգար Հովհաննիսյան (1930–1998)	84
Ստեփան Լուսիկյան (1956–2001)	87
Արմեն Սմբատյան (ծնվ. 1954)	89
Ռոբերտ Ամիրխանյան (ծնվ. 1939)	90
Պասսական հանրամատչելի երաժշտություն	93
Վիեննական դասական երաժշտություն.	96
Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ.	97
Լյուդվիգ վան Բեթհովեն.	100
Ռոմանտիզմ.	101
Ֆրանց Շոպերտ.	102
Ջոակինո Ռոսսինի	103
Կամիլ Սեն–Սանս.	105
Իմպրեսիոնիզմ	107
Կլոդ Դեբյուսի	108
Բառարան	110
Անվանացանկ	112
Տեղանունների ցանկ	114
Առարկայացանկ	115

ՏԱԹԵՎԻԿ ՇԱԽԿՈՒԼՑԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

7

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Հրատարակչության տնօրեն՝
Տեխնիկական խմբագիր՝
Գեղարվեստական խմբագիր՝
Խմբագիր՝
Համակարգչային ձևավորումը՝
Շապիկի համակարգչային մշակումը՝

Էմին Մկրտչյան
Նվարդ Փարսադանյան
Մարիամ Կանայան
Նունիկ Ավետիսյան
Նելլի Ադամյանի
Մարիամ Կանայանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 7,5 տպ. մամուլ
Տառատեսակը՝ GHEA Koryun

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ +37410 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak